

ԱՍ ՓԱՐԹՆԵՐԻ ՔՈՂՄԱՆԱԴԻՎԻ ՔԱՍՏՈՒ  
2011, Մայիս

## Նախատեսվող “Գնիշիկ” արգելավայրի տուրիզմի զարգացման պոտենցիալի գնահատում



Բնության համաշխարհային  
հիմնադրամի հայաստանյան  
մասնաճյուղ



ԱՄ Փարթներ  
Քողմանադիվ քամփինի

## Բովանդակություն

<b>1 ՆԱԽԱԲԱՆ</b>	<b>3</b>
1.1 ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	3
1.2 ՄՊԱՏԱԿՆԵՐԸ	4
1.2.1 Խնդիրներ եւ առաջադրանքներ	4
1.2.2 Մեթոդաբանություն	4
1.2.2.1 Տեղեկությունների հավաքագրում	4
1.2.2.2 Տեղեկատվության դասակարգում եւ վերլուծություն	5
<b>2 ՆԱԽԱՏԵՍՎՈՂ «ԳՆԻՉԻԿ» ԲՅԴՏ ՏՈՒՐԻՉՍԻ ՊՈՏԵՆՑԻԱԼԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ</b>	<b>6</b>
2.1 ԱՄՓՈՓՈՒՄ	6
2.1.1 Ներածություն	6
2.1.2 Էկոտուրիզմի սոցիալ-տնտեսական եւ մշակութային ազդեցությունը	7
2.2 ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՈՒՐԻՉՍԻ ՆԵՐՈՒԺԸ	8
2.2.1 Ընդհանուր ակնարկ	8
2.2.2 Տեղական ինքնակառավարումը	9
2.2.3 Տուրիստական ծառայություններ եւ Միջոցառումներ	10
2.2.3.1 Սևնդի սպասարկումը	10
2.2.3.2 Գիշերակաց	10
2.2.3.3 Միջոցառումներ եւ փառատոններ	10
2.2.4 Ենթակառուցվածքներ	11
2.2.4.1 ճանապարհներ եւ տրանսպորտ	11
2.2.4.2 ճանապարհային նշաններ	11
2.2.4.3 Յեռահաղորդակցություն	12
2.2.4.4 Սոցիալական ենթակառուցվածքներ	12
2.2.4.5 Տեսարժան վայրեր	12
2.3 ԳՆԻՉԻԿ (ՄՈՉՐՈՎ) ՀԱՄԱՅՆՔԻ ՏՈՒՐԻՉՍԻ ՆԵՐՈՒԺԸ	13
2.3.1 Ընդհանուր ակնարկ	13
2.3.2 Տեղական ինքնակառավարումը	14
2.3.3 Տուրիստական ծառայություններ եւ Միջոցառումներ	14
2.3.3.1 Սևնդի սպասարկում	14
2.3.3.2 Գիշերակաց	14
2.3.3.3 Միջոցառումներ եւ փառատոններ	15
2.3.4 Ենթակառուցվածքներ	15
2.3.4.1 ճանապարհներ եւ տրանսպորտ	15
2.3.4.2 ճանապարհային նշաններ	15
2.3.4.3 Յեռահաղորդակցություն	15
2.3.4.4 Սոցիալական ենթակառուցվածքներ	15
2.3.4.5 Տեսարժան վայրեր	16
2.4 ԱԳԱՐԱԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՈՒՐԻՉՍԻ ՆԵՐՈՒԺԸ	16
2.4.1 Ընդհանուր ակնարկ	16
2.4.2 Տեղական ինքնակառավարման մարմին	18
2.4.3 Տուրիստական ծառայություններ եւ Միջոցառումներ	18

2.4.3.1 Սևնդի սպասարկումը.....	18
2.4.3.2 Գիշերակաց.....	18
2.4.3.3 Միջոցառումներ եւ փառատոններ .....	18
<b>2.4.4 Ենթակառուցվածքներ .....</b>	<b>19</b>
2.4.4.1 Ծանապարհներ եւ տրանսպորտ .....	19
2.4.4.2 Ծանապարհային նշաններ .....	19
2.4.4.3 Յեռահաղորդակցություն.....	19
2.4.4.4 Սոցիալական ենթակառուցվածքներ.....	19
2.4.4.5 Տեսարժան վայրեր.....	19
<b>2.5 ԽԱՉԻԿ ՀԱՍԱՅՆՔԻ ՏՈՒՐԻԶՄԻ ՆԵՐՈՒԺԸ .....</b>	<b>20</b>
2.5.1 Ըստհանուր ակնարկ .....	20
2.5.2 Տեղական ինքնակառավարում.....	20
2.5.3 Տուրիստական Շառայություններ եւ Միջոցառումներ.....	21
2.5.3.1 Սևնդի սպասարկում.....	21
2.5.3.2 Գիշերակաց.....	21
2.5.3.3 Միջոցառումներ եւ փառատոններ .....	21
2.5.4 Ենթակառուցվածքներ .....	21
2.5.4.1 Ծանապարհներ եւ տրանսպորտ .....	21
2.5.4.2 Ծանապարհային նշաններ .....	21
2.5.4.3 Յեռահաղորդակցություն.....	21
2.5.4.4 Սոցիալական ենթակառուցվածքներ.....	22
2.5.4.5 Տեսարժան վայրեր.....	22
<b>3 ԵՉՐԱԿԱՆԳՈՒՄՆԵՐ .....</b>	<b>23</b>
3.1 ԸՆԴՀԱՆՈՒՐ .....	23
3.1.1 Ենթակառուցվածքներ .....	25
3.1.2 Զբոսավար-ուղեկցողի հմտություններ .....	25
3.1.3 Կացարաններ.....	25
3.1.4 Սևնդի սպասարկում .....	26
3.1.4.1 Յասարակական սևնդի կետեր .....	26
3.1.4.2 Էթնիկ ճաշատեսակներ .....	27
3.1.5 Տեղական կառավարման մարմիններ .....	27
3.2 ԱՌԱՋԱՐԿՆԵՐ .....	28
<b>4 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ .....</b>	<b>32</b>
4.1 Հավելված 1՝ Յետազոտված Շահառուների Թանկը .....	32
4.2 ՀԱՎԵԼՎԱԾ 2. Յետազոտության գործիքը .....	33
<b>5 I. Ամձնական տվյալներ.....</b>	<b>33</b>

## 1 ՆԱԽԱԲԱՆ

### 1.1 ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի արդյունաբերության եւ գյուղատնտեսության զարգացումը, քնական տարածքների մեծամասշտար յուրացումը, կլիմայի փոփոխությունները բերել են էկոհամակարգերի ամբողջականության եւ հավասարակշռության խախտմանը: Պատճառահետեւանքային ազդեցությունները, ընդհանուր առմամբ, ներառում են խոցելի քնակմիջավայրերի դեգրադացումը, քուսական եւ կենդանական տեսակային կազմի նվազեցումը եւ էկոհամակարգային համալիր մոտեցումների ոչ լիարժեք կիրառումը: Այսպիսով, նվազում են համայնքների սոցիալ-տնտեսական բարեկեցությունն ապահովող հիմնական աղբյուրներից (քնական պաշարներից) օգտվելու հնարավորությունները:

Գլոբալ Էկոլոգիական Յիմնադրամի (ԳԵՅ) եւ ՄԱՀԾ կողմից ֆինանսավորվող, ՀՀ Բնապահպանության նախարարության եւ Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի զարգացումը Ծրագիրը նպատակ ունի անդրադառնալ Վերը ներկայացված խնդիրներին եւ գլոբալ առումով նպաստել կենսաբազմազանության պահպանմանը Հայաստանում: Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի զարգացումը Ծրագիրը (հետայսու՝ Ծրագիր) ներառելու է հետեւյալ բաղադրիչները:

1. Պահպանվող տարածքների օպտիմալացում արգելավայրերի հիմնադրման եւ գործարկման կարգավորիչ եւ ինստիտուցիոնալ շրջանակները բարելավելու միջոցով:
2. Ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում արգելավայրերի կառավարման մի շարք մոդելների ներկայացման (որոնք հիմնականում բացակայում են Հայաստանի Պահպանվող Տարածքների (ՊՏ) կառավարման ներկա ռեժիմից) միջոցով:

Ծրագրի գործողությունների իրականացման արդյունքում կզարգանա բնության հատուկ պահպանվող տարածքների (ԲՅԴ-ների) համակարգը՝ ներառելով մինչ օրս ոչ լիարժեք կերպով ներկայացված էկոհամակարգերը (լեռնամարգագետնային հողեր, ենթալպյան բարձրադիր լեռներ, ալպյան լեռներ) եւ կենսաբազմազանությունը, միաժամանակ նպաստելով աղքատության հաղթահարմանը եւ տնտեսական ու ֆինանսական կայունության հաստատմանը ԲՅԴ-ների տարածում: Ծրագրի ներդրումն արտահայտվում է համայնքներում կառավարման գործընթացը բարելավելու միջոցով՝ միաժամանակ օժանդակելով հաղորդակցության բարելավմանը եւ աղքատության նվազեցմանը: Ծրագրի արդյունքում կմեծանա Հայաստանի ԲՅԴ-ների ֆինանսական կայունությունը: Հայաստանի պահպանվող տարածքների սահմաններից դուրս գտնվող այս էկոհամակարգերը կարեւորագույն դեր են խաղում բազմաթիվ համաշխարհային նշանակության տեսակների, այդ թվում՝ մեծ թվով ագրո-կենսաբազմազանության ռեսուրսների երկարաժամկետ պահպանման համար<sup>1</sup>:

Ծրագրի իրականացման ներքո ԲՀՀ-Հայաստանի կողմից նախաձեռնվել է երեք առանձին մասերից բաղկացած լայնածավալ հետազոտություն՝ ա) Գործող եւ նախատեսվող ԲՅԴ-ների շահառուների հետազոտություն, բ) ԲՅԴ-ներին հարակից համայնքների սոցիալ-տնտեսական իրավիճակային հետազոտություն եւ գ) Տուրիզմի զարգացման պոտենցիալի գնահատում: Սույն առաջարկանքը հանձնարարվել է «ԱՄ Փարթևը Զոնսալթինգ Քամփինի» ՍՊԸ հայկական խորհրդատվական

<sup>1</sup> Ամբողջ բաժինը վերցված է առաջադրանքի տեխնիկական առաջարկից

ընկերությանը: Սույն հաշվետվությունն ամփոփում է նախատեսվող «Գնիշիկ» արգելավայրում տուրիզմի զարգացման գնահատման նպատակով իրականացված հետազոտության արդյունքները:

## 1.2 ՄՊԱՏԱԿՆԵՐԸ

### 1.2.1 Խնդիրներ եւ առաջադրանքներ

Գործող «Զանգեզուր» եւ պլանավորվող «Գնիշիկ» եւ «Խուստուփ» արգելավայրերի *Տուրիզմի պոտենցիալի գնահատումը (ՏՊԳ)* հանդիսանում է ԲՀՊԸ-ների շահագրգիռ կողմերի վերլուծության գնահատման առանձին մասը: ՏՊԳ առաջադրանքը բաղկացած է հետեւյալ մասերից:

- Բացահայտել ԲՀՊԸ-ներում տուրիստական եւ տեսարժան այլ վայրերի առկայությունը, ներառյալ բնական և պատմական հոլշարձանները, ռեկրեացիոն հնարավորությունները եւ այլն,
- Գնահատել տուրիստական ենթակառուցվածքների եւ ծառայությունների առկայությունը եւ վիճակը, (ներառյալ հյուրանոցներ, հյուրատներ, տրանսպորտային ծառայություններ, սրճարաններ եւ ռեստորաններ, զբոսավարներ, թարգմանիչներ եւ այլն):
- Ուսումնասիրել մշակութային ավանդույթների առկայությունը եւ կիրառության աստիճանը:
- Գնահատել տուրիստական երթուղիների առկայությունը եւ նպատակային տարածքներում աշխատող տուր օպերատորների գործունեության ինտենսիվությունը:
- Ուսումնասիրել զբոսաշրջիկներ ընդունելու եւ սպասարկելու նկատմամբ բնակչության վերաբերմունքը
- Այլ հարակից խնդիրներ:

Սույն *ՏՊԳ*-ի ուսումնասիրության առարկա են դարձել բազմաթիվ խնդիրներ, որոնք օգնում են հասկանալ ԲՀՊԸ-ներին հարակից համայնքների տուրիզմի զարգացման ներուժը: Այն բացահայտում է թիրախային տարածքների ուժեղ կողմերը եւ խնդիրները՝ առկա իրավիճակի հետեւողական ուսումնասիրության եւ վերլուծության միջոցով<sup>2</sup>:

**Ներկայացված արդյունքները պետք է (կարող են) օգտագործվեն նախատեսվող արգելավայրերի կառավարման պլանների կազմման ընթացքում:**

### 1.2.2 Մեթոդաբանություն

#### 1.2.2.1 *Տեղեկությունների հավաքագրում*

ՏՊԳ հաշվետվությունը պատրաստելու համար օգտագործվել են առաջնային եւ երկրորդային տեղեկատվության աղբյուրներ: Մշակվել է հարցաշար եւ իրականացվել են շահառուների անհատական հարցումներ<sup>3</sup>: Այցելություններ են կատարվել նախատեսվող «Գնիշիկ» ու «Խուստուփ» եւ գործող «Զանգեզուր» արգելավայրերին հարակից համայնքներ, ինչպես նաև Վայոց Ձորի եւ Սյունիքի մարզական հարցումներ: Կազմակերպվել են հանդիպումներ բոլոր համայնքների ղեկավարների, հասարակական կազմակերպությունների եւ մասնավոր ընկերությունների ներկայացուցիչների, հյուրատների սեփականատերերի եւ համայնքների անդամների հետ:

<sup>2</sup> Ամբողջ բաժինը վերցված է առաջադրանքի տեխնիկական առաջարկից

<sup>3</sup> Տես՝ հավելված 1-ով եւ հավելված 2-ով ներկայացված շահառուների ցանկը եւ հարցաշարը

Երկրորդային աղբյուրները ներառում են նախատեսվող «ԳԱԽՀԻԿ» արգելավայրի կառավարման պլանի ոչ պաշտոնական նախագիծը, Վայոց Զորի տարածքային զարգացման պլանը, Վայոց Զորի տուրիզմի զարգացման կենտրոնի կողմից տպագրված «Վայոց Զոր» բրոշյուրը, Եկոտուրիզմի համաշխարհային համագումարի Եկոտուրիզմի ծառայությունների մշակման, մարզեթինգի եւ խթանման վերաբերյալ հաշվետվությունը, ՀՀ Բնապահպանության նախարարության կողմից պատրաստված «Չանգեզուր» պետական արգելավայր», «Շիկահողի պետական արգելոց» բրոշյուրները եւ Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածների քարտեզը, Չբոսաշրջության զարգացման բնագավառում ԱՄՆ դեսպանության եւ Սյունիքի մարզպետարանի համագործակցության վերաբերյալ տեղեկանքը, ԱՄՆ ՄշԳ «Մրցունակ մասնավոր հատված Հայաստանում (CAPS) Ծրագրի կողմից կատարված «Օտարերկրյա տուրիստական օպերատորների կարծիքներն ու տպավորությունները Հայաստանի մասին» եւ «Հայաստանի ճամփորդության եւ զբոսաշրջության մրցունակության վերլուծություն» ուսումնասիրությունները:

#### *1.2.2.2 Տեղեկատվության դասակարգում եւ վերլուծություն*

Հավաքագրվել է տեղեկատվություն զբոսաշրջային ծառայությունների հետեւյալ ոլորտների՝ գիշերակացի հնարավորությունների, սննդի սպասարկման, տրանսպորտի, զբոսավարության եւ ուղեկցման ծառայությունների, ֆինանսական ծառայությունների առկայության, բժշկական ծառայությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, սոցիալական եւ մշակութային ենթակառուցվածքների (ճանապարհներ, հեռահաղորդակցություն, ջրամատակարարում եւ ջրահեռացում, աղբահեռացում, կրթություն, սպորտ, մշակույթ եւ այլն), ինչպես նաև պատմական եւ բնական հուշարձանների վերաբերյալ:

Ուսումնասիրության նպատակը գործող «Չանգեզուր» եւ նախատեսվող «ԳԱԽՀԻԿ» ու «Խուստուփ» արգելավայրերի Եկոտուրիզմի ներուժի գնահատումն է, ինչպես նաև ծառայությունների եւ ենթակառուցվածքների առկայության եւ վիճակի ուսումնասիրությունը: Առաջարկներ են ներկայացվել նաև Եկոտուրիզմի զարգացման պահանջներին համապատասխան այս ծառայությունների ու ենթակառուցվածքների բարելավման վերաբերյալ:

Եզրահանգումները կատարվել են ԱՄ Փարթևստոր Քոնսալյանգ Քամփնի ընկերության մասնագետների եւ զբոսաշրջության ոլորտի վերլուծություն կատարելու նպատակով հատուկ հրավիրված փորձագետի կողմից:

## 2 ՆԱԽԱՏԵՍՎՈՂ «ԳՆԻՇԻԿ» ԱՐԳԵԼԱՎԱՅՐԻ ՏՈՒՐԻՉՄԻ ՊՈՏԵՆՑԻԱԼԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

### 2.1 ԱՄՓՈՓՈՒՄ

#### 2.1.1 Նեռածություն

Նախատեսվող «Գնիշիկ» արգելավայրն ունի տուրիզմի զարգացման հիմնալի հնարավորություններ, քանի որ այն հարուստ է բնական եւ եզակի պատմամշակութային հուշարձաններով<sup>4</sup> եւ ունի բարենպաստ աշխարհագրական դիրք՝ մոտ գտնվելով Երեւան-Մեղրի մայրուղուն եւ մայրաքաղաք Երեւանին: Այս պահին տարածքն արդեն իսկ ունի մեծաքանակ այցելուներ, քանի որ այստեղ է գտնվում Յայաստանի ամենահայտնի պատմամշակութային հուշարձաններից մեկը՝ Նորավանքի վանական համալիրը: Ընդհանուր առմամբ նախատեսվող «Գնիշիկ» արգելավայրն աչքի է ընկնում իր տեսարժան վայրերով, ինչը լուրջ խթան է հանդիսանում նաեւ եկոտուրիզմի զարգացման համար՝ գրոսաշրջիկների համար ստեղծելով հանգստի եւ տեղական մշակությին ծանոթանալու հավելյալ հնարավորություններ: Այս հանգամանքն առանցքային դերակատարում կունենա ԲՀՊՏ-ներում նոր եկոտուրիզմի հնարավորությունների խթանման գործում:

Նախատեսվող «Գնիշիկ» արգելավայրում գրոսաշրջության զարգացման մեկ այլ կարեւոր խթան է Նորավանք համալիր կանոնավոր տուրեր կազմակերպող Յայաստանի տուր օպերատորների եւ գրոսավարների մեծ մասի իրազեկվածությունը Վայոց Ձոր մարզում առկա ծառայությունների եւ Ենթակառուցվածքների մասին, ինչպիսիք են ճանապարհները, գիշերակացի հնարավորությունները, հեռահղորդակցության եւ սննդի սպասարկման ծառայությունները: Այս հանգամանքը կօգնի նրանց արգելավայրի ծերավորումից հետո շատ կարճ ժամանակահատվածում ընդլայնել իրենց կողմից առաջարկվող ծառայությունների փաթեթները՝ դրանցում ընդգրկելով եկոտուրիզմի նոր ծառայություններ: Երրորդ խթանից գործոնը տուր օպերատորների շրջանում նախատեսվող «Գնիշիկ» արգելավայրի եւ Վայոց Ձորի եկոտուրիզմի ռեսուրսների մասին իրազեկվածության ընդլայնումն է, ինչի արդյունքում արդեն իսկ կազմակերպվում են արկածային տուրիզմի եւ եկոտուրիզմի տուրեր:

Վերջին տարիներին տեղական տուր օպերատորները սկսել են առաջարկել գրոսաշրջային նոր ապրանքներ եւ ծառայություններ Վայոց Ձորում, որոնցից են որսորդությունը, ագրոտուրիզմը եւ մշակութային տուրիզմը: Առաջընթաց է նկատվում նաեւ այցելությունների բազմազանությունն ապահովելու ուղղությամբ: Այսպես, Նորավանքի համալիր այցելող գրոսաշրջիկների խմբերն այցելում են նաեւ Արենի գյուղում գտվող «Արենի» եւ «Թիմլեյ» գինու գործարաններ, որտեղ համտեսում եւ ձեռք են բերում Արենի խաղողից պատրաստված կարմիր չոր եւ կիսաքաղցր, ինչպես նաեւ սպիտակ եւ խաղողի այլ սորտերից պատրաստված գինիներ: Բացի այդ, մեծանում է Արենի գյուղում անցկացվող ավանդական գինու փառատոնի ժողովրդականությունը տեղաբնակների եւ օտարերկրյա այցելուների շրջանում: Մասնավորապես, 2010թ. փառատոնին մասնակցել են անսախաղեա քանակությամբ տեղական եւ օտարերկրյա այցելուներ (2,000-3,000 հոգի): Այս միջոցառումը անցկացնելու համար ՀՀ Կառավարությունը տրամադրել էր 400,000 դրամ՝ տեղաբաշխելով այս Յայաստանի Ազգային Մրցունակության Յիմնադրամի (ՅԱՅՆ) միջոցով: Նախատեսվում է, որ այս գումարը կավելացվի 2011թ. միջոցառումն ավելի արդյունավետ խթանելու նպատակով: Գինու տուրիզմի զարգացմամբ այսօր գրաղվում է նաև Վայքի «Աշխատանք և Հայրենիք»

<sup>4</sup> Նախատեսվող «Գնիշիկ» ԲՀՊՏ բնական եւ պատմամշակութային հուշարձանների նկարագրությունը մանրամասն ներկայացված է Կառավարման Պլանի նախագծում

ՀԿ-ն, որը մասնակցում է Եվրախորհրդի մշակութային ժառանգության կողմից համակարգվող գինու զբոսաշրջության զարգացման ծրագրին:

Նախատեսվող «Գնիշիկ» արգելավայրի տուրիստական հնարավորությունները համարվել են նաեւ վերջին ժամանակներում հնագետների կողմից Արենի-1 քարանձավի հայտնաբերմամբ, որը հայտնի է նաեւ թրչունների քարանձավ անունով, հայտնաբերված աշխարհի հնագույն կոշիկով (5500 տարեկան) եւ հնագույն գինու գործարանով (6100 տարեկան): Այս գտածոները նպաստում են արգելավայրի տուրիստական ռեսուրսների եզակի լինելու համբավի ձեւավորմանը եւ լուրջ հնարավորություններ են ստեղծում հնագիտական տուրերի զարգացման համար:

Ազրոտուրիզմի զարգացման առումով նույնպես լուրջ հնարավորություններ կան, հատկապես խաղողի բերքահավաքի եւ գինու պատրաստմանը մասնակցելու միջոցով, սակայն այս ուղղության թույլ կողմերն են գյուղերում ծառայությունների եւ ենթակառուցվածքի թույլ զարգացած լինելը, օտար լեզուներին չտիրապետելը եւ հաճախորդի սպասարկման հմտությունների բացակայությունը, ինչպես նաեւ զբոսաշրջային փաթեթ վաճառող կազմակերպությունների կողմից ագրոտուրիզմի կազմակերպման հմտությունների պակասը: Ընդհանուր առմամբ, ագրոտուրիզմի զարգացման հնարավորությունները պայմանավորված են գյուղերի տեղանքի գրավչությամբ, պանրի (ներառյալ այժի պանրի) եւ հիմնականում Վայոց Զորում աճող Արենի տեսակի խաղողով գինու պատրաստման ավանդություններով, խաղողի մշակման ավանդույթներով, հարուստ ավանդական խոհանոցով, որտեղ օգտագործվում են տեղական աճեցրած մթերքներ, ծիավարության հնարավորություններով, տեղաբնակների ավանդույթներով եւ կենսակերպով: *Մարտահրավերներից* ե Խաչիկ գյուղի սահմանամերձ կարգավիճակը, քանի որ համայնքը երեք կողմից սահմանակից է Աղրբեջանին: Մշակութային տուրիզմի եւ եթևոտուրիզմի զարգացմանը մեծապես նպաստում է հին գլխատների առկայությունը, «հազարաշեն» ծածկով և երդիկով: Այս տեսերից կան 5-ը Գնիշիկում, 6-ը Արենիում, 2-ը Ազգարակածորում եւ 2-ը Խաչիկում: Այս տեսակի տուրիզմին է նպաստում նաև տեղական բնակչության նախնիների «ուզունների» մասին առասպեկտների և նրանց գերեզմանների, և նրանց կողմից պատրաստված խաչքարերի առկայությունը: «Ուզունները» հայտնի էին աննախադեպ հասակի և ֆիզիկական ուժի պատճառով, որը արտահայտվել է նաև 2.5 մետր բարձրությամբ, կրկնակի խաչով ձևավորած խաչքարերի պատրաստմամբ: «Ուզունների» գերեզմանները պեղվել են գերմանացի մասնագետների կողմից, որոնք հայտնաբերել են մեծ չափսերի մարդկային ոսկորներ:

Յայկական ճարտարապետությունը եւ մասրանկարչությունը իր վրա է կրում ճարտարապետ Մոմիկի ազդեցությունը, ով թաղված է Վայոց Զորի Աղավնաձոր գյուղում: Մոմիկը հանդիսանում է «Գնիշիկ» ԲՀՊՏ-ում գտնվող Նորավանք վանական համալիրի եւ Սուրբ Աստվածածին եկեղեցու հեղինակը:

Նախատեսվող «Գնիշիկ» արգելավայրի ռեսուրսները արդյունավետ կերպով պահպանելու եւ օգտագործելու համար կարեւորագույն խնդիր է հանդիսանում **Եկոտուրիզմի զարգացման կառավարումը** տեղական շահառուների, այդ թվում՝ կառավարման տարածքային եւ տեղական մարմինների, հասարակական եւ մասնավոր կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, ինչը հնարավորություն կտա ապահովել շրջակա միջավայրի մասնակցային պահպանությունը եւ արդյունավետ կերպով օգտագործել ռեսուրսները՝ եկամտի աղբյուր ստեղծելով տեղական բնակչության համար:

## 2.1.2 Եկոտուրիզմի սոցիալ-տնտեսական եւ մշակութային ազդեցությունը

Եկոտուրիզմն ունի տեղական մակարդակով աշխատատեղերի ստեղծման եւ եկամտի ձեւավորման մեջ ներուժ, քանի որ այն նպատակ ունի գրավել բնությունը տեսնել եւ վայելել ցանկացողներին,

ովքեր իրենց այցելության ժամանակ վճարում են զանազան ծառայությունների՝ սննդի, կացարանի, զբոսավարության եւ ուղեկցման, տրանսպորտի, սարքավորումների եւ այլնի համար: Այս նաեւ նպաստում է վայրի բնության պահպանմանը, քանի որ եկոտուրիզմից ստացվող հարկային մուտքերի ավելացման շնորհիվ հնարավոր է դաշնում ֆինանսավորել բնության վերականգնման եւ պահպանման համար անհրաժեշտ միջոցառումները: Սակայն կան նաեւ բազմաթիվ օրինակներ, երբ եկոտուրիզմից գոյացած միջոցները «հոսում են» դուրս, քանի որ տեղում չկան անհրաժեշտ հմտություններ, սննդի սպասարկման ծառայություններ կամ գիշերակացի հնարավորություններ: Կան նաեւ բնության վրա եկոտուրիզմի բացասական ազդեցությունների մասին վկայող բազմաթիվ օրինակներ, երբ չեն գործում շրջակա միջավայրի պահպանության համապատասխան հաստատություններ կամ կանոնակարգեր, կամ երբ կարգավորման գործընթացում գերակայությունը տրվում է եկամուտ վաստակելուն:

Եկոտուրիզմի զարգացումը կարող է նաեւ լուրջ բացասական ազդեցություն թողնել տեղական մշակույթի վրա, քանի որ անհրաժեշտ է «ցույց տալ տեղական մշակույթը եւ ժառանգությունը, մինչդեռ հաճախ դրանք «փաթեթավորվում» են, հարմարեցվելով արտաքին ակնկալիքներին: Մշտական վտանգ է հանդիսանում սովորույթների որակագրկումը, երբ դրանք վերածվում են փոփ մշակույթի»<sup>5</sup>:

Շահառուների հետ հանդիպումները վկայում են, որ համայնքի բնակիչները եւ ղեկավարները լուսորեն հետաքրքրված են եկոտուրիզմից եկամուտների ստացման հեռանկարով եւ պատրաստ են առկա միջոցներով նպաստել եկոտուրիզմի զարգացմանը, մինչդեռ շրջակա միջավայրի պահպանության մասին մտահղությունները հիմնականում արտահայտվում են ՀԿ-Ների եւ Ներկայումս եկոտուրիզմի ծառայություններ մատուցող գործակալությունների կողմից: Հարցմանը մասնակցած տուրիստական գործակալություններն իրենց պատրաստակամությունն են հայտնել մասնակցելու եւ աջակցելու նախատեսվող «Գնիշիկ» արգելավայր ի ստեղծման գործընթացին՝ օգտագործելով իրենց ընկերությունների ռեսուրսները:

Նկար 1 - Նորավանքի Վանական Համալիրը

## 2.2 ԱՐԵՆԻ ՀԱՍՎՅՆՔԻ ՏՈՒՐԻՉԱՆԻ ՆԵՐՈՒԺԸ

### 2.2.1 Ընդհանուր ակնարկ

Ավանդաբար, զբոսաշրջային խմբերը Արենի համայնք են այցելել Նորավանքի վանական համալիրին ծանոթանալու նպատակով, որը գտնվում է Արենի գյուղի սահմաններից դուրս, Նորավանքի կիրճում: Վերջին 8-12 տարիների ընթացքում Արենի համբավը մեծացավ տուր օպերատորների



շրջանում նաեւ Արենի գինու պատճառով, որը պատրաստվում է Արենի տեսակի խաղողից, որը եղակի է աշխարհում այն իմաստով, որ իր հրաշալի համայն հատկանիշները ստանում է միայն Վայոց Զորում աճելու պարագայում: Ինչպես արեն նշվել է, այստեղ առաջացել են նաեւ զբոսաշրջության զարգացման նոր հնարավորություններ՝ պայմանավորված Արենի-1 քարանձավով:

<sup>5</sup> Հոդում՝ Effects of Ecotourism, Oct. 31<sup>st</sup>, 2008, Saikat, <http://www.aboutmyplanet.com/environment/effects-ecotourism/>

Նոր հնարավորություններն առայժմ չեն օգտագործվում տուր օպերատորների կողմից, եւ զբոսաշրջիկների թիվը դեռևս մեծ չէ:

Ուժեղ կողմերից են համայնքի բարենպաստ դիրքը (գտնվում է Երեւանից 1.5 ժամ հեռավորության վրա), դեպի հիմնական տեսարժան վայրեր (Նորավանքի համալիր, Թուզունների քարանձավ, Մագիլի քարանձավ) տանող ճանապարհների լավ վիճակը, համեմատաբար բարձր կարգի ռեստորանների եւ սրճարանների առկայությունը («Հարսնասար», «Էրեմ», եւ քարանձավում գտնվող սրճարան՝ «Վարդգեսի քարանձավը»): Այստեղ գործում է նաեւ ոչ մեծ, ընդամենը երկու մահճակալից բաղկացած կացարան: Այս վայրը կարծ ժամանակում բավականին մեծ համբավ է ձեռք բերել տուր օպերատորների շրջանում իր յուրահատուկ եւ էկզոտիկ միջավայրի շնորհիվ:

Նկար 2 - Արենիում գտնվող Մագիլի քարանձավի չոչիկները<sup>6</sup>



Կրեսի համայնքն ունի նաեւ հինգ գործող հյուրատուն եւ եւս երկու նմանատիպ տներ՝ սառը եւ տաք ջրամատակարարմամբ, մաքուր սանհանգույցներով եւ կահավորված ննջարաններով: Սեփականատերերը ցանկություն են հայտնել վերածել դրանք հյուրատուների: Յյուրատուների սեփականատերերը մասնակցել են 2010թ. անցկացված հյուրատուների գործարկման վերաբերյալ Եղեգնաձորում կազմակերպված դասընթացին:

Թույլ կողմերի թվում կարելի է նշել գինեգործարաններում գինու համտեսման սրահների բացակայությունը, գինեգործարանների սեփականատերերի կառավարման թույլ հմտությունները, այցելուների համար նախատեսված տեղեկատվության պակասը, Կրեսի գյուղի էկոտուրիզմի ռեսուրսների խթանման եւ այցելուների կողմից բնության պահպանության պահանջների կատարումն ապահովելու անհրաժեշտ հմտությունների եւ ռեսուրսների բացակայությունը:

Արենիում գարգացման լուրջ հնարավորություններ ունեն տուրիզմի այնախսի տեսակներ, ինչպիսիք են պատմամշակութային տուրիզմը, ուխտագնացությունը, արշավները, թռչնադիտումը (օրինակ՝ սպիտակագլուխ անգի դիտումը Նորավանքի կիրճում), հնագիտական արշավները, գինու տուրիզմը և ժայռամագլցումը:

## 2.2.2 Տեղական ինքնակառավարումը

Կրեսի համայնքը բավականին ուժեղ է տեղական ինքնակառավարման տեսանկյունից: Առկա են բավարար կազմակերպչական հմտություններ, պատմական գիտելիքներ եւ տուրիզմի գարգացման ներուժը հասկանալու կարողություն: Համայնքի ղեկավարությունն ակտիվորեն մասնակցում է տարրեր ընսարկումների եւ լավատեղյակ է համայնքի եւ նախատեսվող «Գնիշիկ» արգելավայրի տուրիստական ռեսուրսների մասին: Համայնքը կարողանում է մասնակի ֆինանսավորել Գինու փառատոնի անցկացումը, դրամական օժանդակություն հատկացնել երիտասարդ ընտանիքներին նորածին երեխա ունենալու դեպքում:

<sup>6</sup> Աղբյուր՝ [www.armeniapedia.org](http://www.armeniapedia.org)

Ի տարբերություն նախատեսվող «Գնիշիկ» արգելավայրի այլ համայնքների, մասամբ նաեւ համայնքի ղեկավարության շանքերով, Արենիում կազմակերպվում են ավանդական եւ մշակութային միջոցառումներ, ինչպիսիք են Գինու փառատոնը, Յաղթանակի տոնը մայիսի 9-ին, Աշխատանքի տոնը մայիսի 1-ին եւ Անկախության տոնը Սեպտեմբերի 21-ին: Ինչպես նշում է «Մանուդա» ՍՊԸ ղեկավար Նունե Մանուկյանը, ով շահել է ՀՀ Եկոնոմիկայի Նախարարության կողմից կազմակերպված մրցույթը 2010թ. Գինու փառատոնը Արենի գյուղում կազմակերպելու համար, այդ տարվա հաջողությունը պայմանավորված է եղել նաեւ համայնքապետարանի շանքերով:

## **2.2.3 Տուրիստական Շառայություններ եւ Միջոցառումներ**

### ***2.2.3.1 Անդի սպասարկումը***

Արենի համայնքում սևնդի սպասարկումն իրականացվում է մի քանի ռեստորանների կողմից՝ հիմնականում կառուցված մայրուղուն հարակից տարածքներում, որոնցից երկուսը՝ «Եղեմը» եւ «Յարսնասարը», համեմատաբար բարձր կարգի ծառայություններ եւ սևունդ (տեղական եւ եվրոպական խոհանոցից) են մատուցում: Դրանցից յուրաքանչյուրը կարող է սպասարկել մինչեւ 200 մարդ միաժամանակ եւ ունի փակ ու բացօթյա սրահներ: Եվս մեկ փոքր ռեստորան կա Արենիի շուկայի մոտ, գյուղի կենտրոնից մեկ կիլոմետր հեռավորության վրա եւ եւս երկուսը՝ համայնքի ներսում: Վերջիններս, սակայն ունեն պարզ ճաշացանկ, աշխատակիցները չեն տիրապետում օտար լեզուների, ունեն ցածր մակարդակի սպասարկում եւ ոչ գրավիչ ներքին հարդարանք:

Տեղաբնակ այցելուները հաճախ օգտվում են շուկայի առանձին տաղավարներում սևնդի սպասարկման կետերից, որտեղ գյուղացիները պատրաստում եւ հրամցնում են դավուրմա, տնական ծու, տնական օղի եւ Արենի գինի: Արենիում սևնդի սպասարկման ամենագրավիչ հաստատություններից է «Վարդեսի քարանձավը», որը տեղակայված է Նորավանք տանող ճանապարհի վրա գտնվող քարանձավում եւ ունի գրավիչ շոշապատող միջավայր: Միաժամանակ այդ տնտեսվարող սուբյեկտի գործունեությունը դեռեւ ենթակա է որոշակի կարգավորման: Արենիում գիշերող այցելուները օգտվում են գյուղի տարածքում գտնվող երկու փոքր ռեստորաններից, ինչպես նաեւ կարող են սնվել այն հյուրատներում, որտեղ հանգրվանել են:

### ***2.2.3.2 Գիշերակաց***

Արենիում գիշերակացի հևարավորություններ ընձեռում են 7 հյուրատներ, որոնցից 5-ն արդեն հյուրեր են ընդունել 2010թ.: Բոլոր 7 հյուրատների սեփականատերերը մասնակցել են 2010թ. Եղեգնաձորում անցկացված դասընթացներին: 7 հյուրատներից միայն մեկի ներկայացուցիչն է տիրապետում օտար լեզուների՝ գերմաներենի եւ անգլերենի, քանի որ դասավանդում է այդ լեզուները գյուղական դպրոցում: Ինչպես արդեն նշվել է, մի ոչ մեծ կացարան էլ կա «Վարդեսի քարանձավում»:

### ***2.2.3.3 Միջոցառումներ եւ փառատոներ***

2004թ.-ից ի վեր կազմակերպվող Արենիի Գինու փառատոնը վերածվել է համեմատաբար խոշոր միջոցառման, մինչեւ 3000 մասնակիցներով Յայաստանից եւ արտասահմանից: Միջոցառումը կազմակերպվում է գյուղի կենտրոնական մասում՝ հրապարակում, որտեղ այցելուները կարող են համտեսել եւ ծերք բերել տեղական գործարանների եւ գյուղացիների կողմից պատրաստված Արենի

գինին, ինչպես նաեւ ավանդական կերակրատեսակներ եւ տեղական միրգ ու բանջարեղեն: Միջոցառման անցկացվող վայրին մոտ գտնվող տների բնակիչները նույնականացնելու մասնակցում են փառատոնին՝ բացելով իրենց դարբասները եւ սնունդ ու խմիչք հյուրասիրելով այցելուներին:

Միջոցառումը մեծ ոգեւորություն է առաջացնում թե՛ այցելուների շրջանում, ովքեր ինարավորություն են ստանում համտեսելու գինի, ազգային կերակրատեսակներ եւ ուսկընդուլու ավանդական երգ ու պար, թե՛ ցուցադրողների շրջանում, ովքեր վաճառում են գինի, լավաշ, միրգ, բանջարեղեն, դավուրմա եւ այդ օրը վաստակում են իրենց միջին ամսեկան եկամուտից 100,000-200,000 դրամ ավել:

Ինչպես արդեն նշվել է, 2010թ. Մանուկա Մարգեթինագ ընկերությունը ՀՀ Կառավարությունից ստացել է 400,000 ՀՀ դրամ միջոցառման գովազդի եւ կազմակերպման համար: ՀՀ

Կառավարությունը 2011թ. կավելացնի օժանդակության գումարը՝ հաշվի առնելով միջոցառման մեծացող համբավը: Իսկ փառատոնը կիրականացվի Յայաստանի Ազգային Մրցունակության Յիմնադրամի (ՅԱՄՅ) կողմից:

Նկար 3 - Արենիի Գինու փառատոնը, հոկտեմբեր 2010թ.<sup>7</sup>



## 2.2.4 Ենթակառուցվածքներ

### 2.2.4.1 ճանապարհներ եւ տրանսպորտ

Արենի համայնքը գտնվում է Երեւան-Մեղրի հիմնական մայրուղու վրա: Յամայնքի միջով են անցնում դեպի Վայոց Ձորի մարզկենտրոն Եղեգնաձոր եւ դեպի Սյունիքի մարզ անցնող ճանապարհը եւ հասարակական տրանսպորտը: Ճանապարհների վիճակը լավ է. դրանք անցանելի են ողջ տարվա ընթացքում: Դեպի մարզկենտրոն ճանապարհն ասֆալտապատ է եւ գտնվում է լավ վիճակում: Ներհամայնքային ճանապարհներն ասֆալտապատ չեն, սակայն գտնվում են նորմալ վիճակում: Շարաթական 5 օր, եւ օրական 3 անգամ հասարակական տրանսպորտ է մեկնում Արենիից մարզկենտրոն: Մեծ հաշվով ճանապարհների վիճակը չի կարող խոչընդոտել տուրիզմի զարգացմանը:

### 2.2.4.2 ճանապարհային նշաններ

Ճանապարհային նշաններ կան ե՛ Արենի գյուղի մուտքի մոտ, ե՛ գյուղի տարածքում, որոնք ցույց են տալիս դեպի հիմնական հուշարձաններ, մասնավորապես, Նորավանքի համալիր, Սուլք Աստվածածին եկեղեցի եւ մոտակա համայնքներ տանող ճանապարհը: Գյուղի կենտրոնում կա բազմալեզու տեղեկատվական վահանակ, որը տեղադրվել է «Յայկական հուշարձանների ճանաչման ծրագրի», CAPS ծրագրի եւ «ՎիվաՍել-ՍՏՏ»-ի օժանդակությամբ: Վահանակը ներկայացնում է Արենի համայնքի պատմությունը եւ ցույց է տալիս դեպի վերոհիշյալ երկու

<sup>7</sup> Աղբյուր՝ <http://ditord.com/2010/10/19/areni-wine-festival-celebration-of-wine-food-and-fine-armenian-spirit/>

հիմնական հուշարձաններ տանող ճանապարհը: Ինչեւէ, ճանապարհային նշանները ուղենչում են միայն արշավների եւ վրանային ճամբարների, ինչպես նաև Նորավանքից եւ Սուրբ Աստվածածին Եկեղեցու ճանապարհը, իսկ մյուս պատմամշակութային հուշարձանների համար չկան:

#### 2.2.4.3 Հեռահաղորդակցություն

Արենի համայնքի բոլոր տներում կա կանոնավոր աշխատող գծային հեռախոսակապ: Լիովին հասանելի են շարժական հեռախոսակապի բոլոր երեք տեղական օաերատորների կողմից առաջարկվող հեռահաղորդակցության ծառայությունները: Յամացանցի ծառայությունների տեղական մատակարարներ չկան. համացանցը հասանելի է շարժական հեռախոսակապի մոդեմներով: Փոստային կապը համայնքում գործում է: Յամայնքին հասանելի են հեռուստատեսային 3 տեղական եւ 2 ռուսական ալիքների հաղորդումները եւ մեկ ռադիո ալիք: Հեռահաղորդակցության մակարդակը բուն համայնքում կարելի է բավարար համարել, սակայն հիմնական մայրուղիներից դուրս գտնվող հատվածներում հեռահաղորդակցության ծառայությունների մատուցման որակը դեռեւս բարելավման տեղ ունի:

#### 2.2.4.4 Սոցիալական ենթակառուցվածքներ

Արենիում կա միջնակարգ դպրոց՝ 222 աշակերտներով: Սպորտային դահլիճը կառուցվում է, բայց սպորտային խմբակներ դեռ չկան: Գործում է առողջապահական կենտրոն՝ 2 բժիշկներով, 1 ատամաբույժով եւ 3 քույրերով: Յամայնքում գործում է դեղատուն, սակայն շտապ օգնության մեջենա չկա: Յամայնքում մշտապես գործում են գրադարան եւ մշակույթի տուն, որոնց հետագա գարգացումն իր ներդրումը կարող է ունենալ տուրիզմի զարգացման տեսանկյունից:

#### 2.2.4.5 Տեսարժան վայրեր

Արենի համայնքի հիմնական տեսարժան վայրերի թվում կարելի է նշել.

- Արենիի Սուրբ Աստվածածին Եկեղեցին,
- Նորավանքի վանական համալիրը,
- Յրաշքաբերդը,
- Սուրբ Սարգիս փողոց սրբատեղին,
- Սուրբ Գրիգոր սրբատեղին,
- Բազմաթիվ խաչքարեր եւ ավերակներ,
- Կապի տակ սրբատեղին, Սուրբ Սահակ սրբավայրը, Խաչի բլուրը Վարդապետի հող կոչվող վայրում,
- «Դայեկի քար» բլուրը գյուղի մուտքի մոտ,
- Արփա գետի հովիտը,
- Միջնադարյան գերեզմանները,
- Քարայրներում գտնվող իին բնակավայրերը,
- Արփա գետի վրայով անցնող XIII դ. կամրջի ավերակները,
- 1894թ. կառուցված Արփա գետի վրայով անցնող երկաթե կամուրջը,
- Արենի-1 քարանձավը (Թռչունների քարանձավ) իր հնագույն գինեգործարանով եւ կաշվե կոշիկով,
- Մագելի քարանձավը,
- «Վարդգեսի» քարանձավը,
- 6 «Յազարաշեն» տները:

## 2.3 ԳՏԻՇԻԿ (ՄՈՉՐՈՎ) ՀԱՍԱՅՆԵՒ ՏՈՒՐԻՉՄԻ ՆԵՐՈՒԺԸ


### 2.3.1 Ընդհանուր ակնարկ

Գտիշիկ (Մոջրով) համայսքի ուժեղ կողմը բնական հուշարձանների առկայությունն է. Մոջրովի եւ Վրշերի քարանձավները, որոնք հարուստ են գունագեղ ստալակտիտներով, ստալագմիտներով եւ ստալագմատներով: Յամածայն Վայոց Զորի «Տուրիզմի Զարգացման Կենտրոնի», Մոջրովի քարանձավն ունի 167 մետր երկարություն, իսկ Վրշերինը՝ 2.7 կիլոմետր:

Կառավարման պլանի բացակայության պատճառով քարանձավները չեն օգտագործվում, միևնույն նրանք լուրջ հնարավորություններ կարող են ստեղծել եկոտուրիզմի զարգացման համար: Թեեւ քարանձավի մուտքը փակված է, այնուամենայնիվ, վայրագության բազմաթիվ դեպքեր են գրանցվել, որոնց պատճառով վնասվել են քարանձավների ֆորմացիաները (տես նկարը): *Տեղի բնակչության վկայությամբ, ստալակտիտները ջարդում եւ գողանում են որպես հուշանվեր վաճառելու նպատակով:*

Դայաստանի Մրցունակության Ազգային Հիմնադրամի (ՀՄՀՀ) ջանքերով ծրագիր է մշակվում Մոջրովի քարանձավը զբոսաշրջային նպատակներով գործարկելու համար մասնավոր ներդրումներ ներգրավելու նպատակով: Ծրագրի իրականացման համար քննարկվում է Ենթակառուցվածքների՝ ջրի, Էլեկտրամատակարարման եւ ճանապարհների պետական միջոցներով վերականգնման եւ քարանձավը մասնավոր ներդրումների համար գրավիչ դարձնելու հնարավորությունը: Մոջրովի ծրագիրն ընդգրկված է ՀՄՀՀ-ի «Հարավային միջանցք» նախագծում:

Նկար 4 - Մոջրովի քարանձավի ֆորմացիաները



Գտիշիկ (Մոջրով) համայնքում Եկոտուրիզմի հնարավորությունները ներառում են նաեւ պատմամշակութային տուրիզմը, ազրոտուրիզմը, քայլարշավները, վրանային ձամբարների կազմակերպումը, արկածային տուրիզմը եւ այլն (Վայոց կենտրոնիների դիտումը, հեծանվային արշավները, գիշերակաց արշավները): Մշակութային և էրնոտուրիզմի զարգացման հնարավորությունները պայմանավորված են «հազարաշեն» տների առկայությամբ, սևնդի պատրաստման եւ տեղական այլ ավանդույթներով, «ուզուներ» մշակույթով, որն ընդգրկում է Գտիշիկում հայտնաբերված «ուզուներ»-ի գերեզմանները, նրանց կողմից պատրաստված կրկնակի խաչոց, 2.5 մետր բարձրությամբ խաչքարերը եւ նրանց մասին պահպանված առասպելները, և այլն: Տուրիզմի զարգացումը սահմանափակվում է լավ վիճակում գտնվող ննջարաններ եւ սանհանգույցներ ունեցող հյուրատների սակագությամբ: Սանհանգույցները այստեղի տներում հիմնականում գտնվում են բակում, ունեն շատ վատ տեսք, հարմար չեն օգտագործելու համար եւ ունեն սանիտարական խնդիր: Այստեղ օժանդակության կարիք կա հյուրընկալության հմտությունների զարգացման, օտար լեզուներ սովորեցնելու եւ փոքր դրամաշնորհների, որպեսզի գյուղացիները կարողանան վերանորոգել իրենց տները: Յամայնքի շրջակայքում կան հարմար վայրեր, որտեղ տուր օպերատորները այցելուներ են բերում յուրաքանչյուր տարի վրանային ճամբար կազմակերպելու համար: Այս ծառայությունը կարելի է զարգացնել, հաշվի առնելով քայլարշավների

համար հարմար երթուղիների առկայությունը, որոնք անցնում են ԳԱՀՀԻԿի կիրճով եւ անցնում դեպի Նորավանքի համալիր:

Յամայնքի թույլ կողմերն են սևնդի եւ գիշերակացի հնարավորությունների բացակայությունը, տեղեկատվության հնարավորությունների բացակայությունը այցելուների եւ տուր օպերատորների համար, համայնքում կարողությունների անբավարարությունը, տուրիզմի զարգացման հնարավորությունների սակավությունը, այցելուներին հետեւելու (որպեսզի նրանք չվնասեն բնությունը) հնարավորությունների եւ օտար լեզվի իմացության բացակայությունը:

### **2.3.2 Տեղական ինքնակառավարումը**

ԳԱՀՀԻԿ (Մոզրով) համայնքի դեկավարությունն անփոփոխ է եղել վերջին 8 տարիների ընթացքում: Յամայնքապետարանը լավ տեղեկացված է առկա բնական եւ տուրիստական ռեսուրսների՝ ֆլորայի, ֆաունայի, քայլարշավային երթուղիների եւ քարանձավների մասին: Որոշ դեպքերում համայնքապետն անձամբ է ուղեկցում այցելուներին:

Յամայնքը գործնական հարաբերություններ է ձեւավորել դեպի ԳԱՀՀԻԿ այցելություններ կազմակերպող տուր օպերատորների հետ: Յամայնքապետարանն ուղղակիորեն ներգրավված է գրոսաշրջիկներին սպասարկելու մեջ. գրոսաշրջիկներին ուղեկցում են դեպի քարանձավներ, տրամադրում են գիշերակացի պայմաններ, տրամադրում են ծիեր ծիավարության համար: Սակայն համայնքապետարանն առ այսօր չի կարողացել կազմակերպել համայնքի թերեւս ամենաարժեքավոր ռեսուրսը հանդիսացող քարանձավների պահպանությունը: Քարանձավի ժամանակակից գործառությունները շարոդված են եւ ոչինչ չի խանգարում վայրագություններին. վնասվում են քարանձավների հիմնական ռեսուրսները, ստալակտիտները, ստալագմիտները եւ ստալագնատները:

### **2.3.3 Տուրիստական Շառայություններ եւ Միջոցառումներ**

#### **2.3.3.1 Սևնդի սպասարկում**

ԳԱՀՀԻԿ (Մոզրով) համայնքում սևնդի սպասարկում չկա, քանի որ այստեղ չկան ռեստորաններ եւ հյուրատներ: Սևնդի սպասարկման համար լրացուցիչ խնդիր է հանդիսանում Վրենիից հեռու գտնվելը, որտեղ գործում են հասարակական սևնդի կետեր: Այս խնդիրը լուծելու համար կարելի է օժանդակել համայնքի գյուղացիներից որեւէ մեկին՝ իր տանը ավանդական հացատուն գործարկելու համար: Օժանդակությունը կարող է ներառել փոքր դրամաշնորհ սպասարկման համար անհրաժեշտ սարքավորումներ եւ գույք գնելու համար եւ վերապատրաստման դասընթաց՝ հյուրերի սպասարկման հմտություններ զարգացնելու համար:

#### **2.3.3.2 Գիշերակաց**

Յամայնքում գիշերակացի հնարավորություններ չկան: Ինչպես արդեն նշվեց, դրա հիմնական պատճառը գյուղական տների անշուր վիճակն է, որի պատճառով նրանք չեն կարող օգտագործվել որպես հյուրատներ: Այս տների սանհանգույցները գտնվում են դրսում, ունեն վատ տեսք, հարմար չեն օգտագործելու համար եւ ունեն սանհտարական խնդիրներ: Նախկինում համայնք այցելած

զբոսաշրջիկները գիշերել են գյուղապետի տանը, որն ունի համեմատաբար ավելի լավ կահավորված նևշարան, բայց ունի սանհանգույցի նույն խնդիրը, ինչ համայնքի մնացած տները:

### 2.3.3.3 Միջոցառումներ Եւ փառատուններ

Համայնքում միջոցառումներ չեն կազմակերպվում:

## 2.3.4 Ենթակառուցվածքներ

### 2.3.4.1 ճանապարհներ Եւ տրանսպորտ

Գնիշիկը մարզկենտրոնի հետ կապող հասարակական տրանսպորտն աշխատում է կանոնավոր՝ շաբաթական 5 օր, օրական 3 անգամ: Այս ճանապարհի հիմնական մասն ասֆալտապատ է եւ անցանելի կլոր տարին: Սակայն կան հատվածներ՝ հատկապես դեպի Մոգրով գնացող, որտեղ ճանապարհներն այնքան ել լավ չեն: Այստեղ ճանապարհները տարվա ընթացքում մի քանի օր անանցանելի են դառնում: Այս երեւույթն անհապաղ անդրադարձի կարիք է գգում, քանի որ ճանապարհների նման վիճակը կարող է գգալիորեն խոչընդոտել տուրիզմի զարգացմանը համայնքում: Ներհամայնքային ճանապարհները եւս լավը չեն եւ վերանորոգման կարիք են գգում:

### 2.3.4.2 ճանապարհային նշաններ

Թեեւ համայնքն ունի քայլարշավների եւ վրանային ճամբարների համար հրաշալի վայրեր, այնուամենայնիվ, որեւէ նշաններ, որոնք կարող են օգնել այցելուներին հասկանալ արշավի ուղղությունը, երկարությունը կամ վրանային ճամբարի համար հարմար վայրերը, չկան:

### 2.3.4.3 Հեռահաղորդակցություն

Գծային հեռախոսակապով ապահովված են Գնիշիկ (Մոգրով) համայնքի SS-ների 60%-ը միայն: Շարժական կապի ծառայություններից արդյունավետ է օգտվել հիմնականում VivaCell-ի կապից՝ մյուս երկու օպերատորների կապը բավականին թույլ է: Փոստային կապը համայնքում գործում է: Համացանցը համայնքում հասանելի է բացառապես շարժական կապի մոդեմների միջոցով, սակայն կապի որակն, այնուամենայնիվ, շատ վատն է: Համայնքին հասանելի են հեռուստատեսային 3 տեղական եւ 1 ռուսական ալիքների հաղորդումները: Ուաղին ալիքներ չեն հեռարձակվում: Հեռահաղորդակցության մակարդակը բուն համայնքում բավարար համարել չի կարելի. ծառայությունների մատուցման որակը դեռեւս բարելավման տեղ ունի:

### 2.3.4.4 Սոցիալական Ենթակառուցվածքներ

Գնիշիկ համայնքում գործում է 8-ամյա դպրոց՝ ընդամենը 2 աշակերտով: Սպորտային կառույցներ եւ խմբակներ չկան, բժշկական ենթակառուցվածքներ չկան: Սա լուրջ խնդիր է ոչ միայն տուրիզմի զարգացման, այլ նաև ընդհանրապես համայնքի գոյատեւման տեսանկյունից: Միակ կառույցը, որը գոյություն ունի համայնքում գրադարանն է, որը սակայն բարվոք վիճակում չի գտնվում: Կարելի է ամփոփել, որ սոցիալական ենթակառուցվածքների առումով Գնիշիկ համայնքում տուրիզմը զարգացմանը նպաստող ենթակառուցվածքներ չկան:

### 2.3.4.5 Տեսարժան վայրեր

Գնիշիկ (Սոզրով) համայնքի հիմնական տեսարժան վայրերի թվում կարելի է նշել.

- Մոզրովի քարանձավը,
- Աղջերի քարանձավը,
- Նախկինում որպես բնակարան օգտագործվող քարայրները,
- «Հազարաշեն» տները,
- Դամբարանադաշտերը,
- Գնիշիկի կիրճը,
- Ուզունների խաչքարերը,
- XIX-րդ դարի Եկեղեցին, XII-XIII-րդ դարի խաչքարերով,
- V-րդ դարի Եկեղեցու ավերակները,
- Գիհու անտառները:

## 2.4 ԱԳԱՐԱԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՈՒՐԻՉՄԻ ՆԵՐՈՒԺԸ

### 2.4.1 Ընդհանուր ակնարկ

Ագարակաձոր համայնքի հիմնական առավելությունը կայանում է նրանում, որ այն գտնվում է հիմնական մայրուղուց ընդամենը 1.5 կմ եւ մարզկենտրոն Եղեգնաձորից՝ 3 կմ հեռավորության վրա: Ագարակաձորի պատմամշակութային հուշարձանները ներկայացված են XIV-XVII դարի Եկեղեցիներով, որոնց թիվը հասնում է 17-ի<sup>8</sup>, XIII-րդ դարերի կամրջով, որը գտնվել է «Մետաքսի ճանապարհի» վրա եւ գործում է մինչ օրս: Պատմամշակութային հուշարձանները գտնվում են Ագարակաձորի համայնքը ներկայացնող երեք գյուղերի եւ գյուղատեղիների տարածքում, որոնցից են Ագարակաձորը, Բոլորաբերդը, եւ Գանձակը (Ենգիշա): Յուշարձաններից շատերի կառուցները գտնվում են կիսաքանդ վիճակում:

Բնական հուշարձանները ներկայացված են տաք հանքային ջրերով, քարանձավներով, որտեղ կան եզակի գերեզմաններ, որոնցում հանգույցալները թաղված են եղել նստած վիճակում, գեղատեսիլ ծորով, եւ հարուստ կենդանական եւ բուսական աշխարհով: Ինչպես եւ Վայոց Զորի մնացած մասերում, Ագարակաձորում նույնպես, կան եզակի պատմական եւ բնական հուշարձաններ, ինչը համայնքի ուժեղ կողմերից է: Խմելու ջրի աղբյուրների առկայությունը նույնպես ուժեղացնում է ինչպես պատմամշակութային, այսպես ել էկոտուրիզմի զարգացման հնարավորությունները: Ագարակաձորը Վայոց Զորի մարզում երկրորդ վայրն է, որտեղ կա հանքային ջրի աղբյուր, ինչը հնարավորություն է ստեղծում SPA տուրիզմի զարգացման

Նկար 5 - Ագարակաձորի տաք ջրի աղբյուրը



<sup>8</sup> Յամաձայն տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրված տեղեկությունների:

համար:

2004թ.-ից Վայոց Զորում կազմակերպվում են նաեւ որսորդական ուղեւորություններ, այդ թվում՝ Ագարակածորի համայնքի տարածքում, որը մտնում է Նախատեսվող «Գնիշիկ» արգելավայրի մեջ: Այս ուղեւորությունները կազմակերպվում են «Սաֆարի ինտերնեյշն» ընկերության կողմից: Սկզբնական շրջանում այս ընկերության գործունեությունը խիստ քննադատության արժանացավ տեղի բնակչության եւ տուրիզմի շահառությի կողմից որսորդային տուրեր կազմակերպելու համար մի վայրում, որտեղ վայրի կենդանիների գիշաքանակը արագորեն նվազում էր: Ընկերության պատասխանը եղավ այն, որ իր շանքերով կատարվել են հսկայական ներդրումներ (մոտ 1,000,000 ԱՄՆ դրամ) կենդանիներին որսագողությունից պաշտպանելու եւ դրանց գլխաքանակը ավելացնելու նպատակով: Ըստ ընկերության կողմից ներկայացված տվյալների՝ եզակի կենդանիների քանակը, ներառյալ բեզոարյան այժի եւ գորշ արշի, աճել է զգալիորեն, իսկ որոշ կենդանիներ, որոնք արդեն վերացել են, նորից վերադարձել են այս տարածք. օրինակ՝ կովկասյան ընձառյուծը եւ վայրի խոզը:

Նկար 6 - Ագարակածորի հանգստյան վայրերի վատ պայմանները



Կենդանիների քանակի մասին դիտարկումները կատարվել են «Սաֆարի ինտերնեյշն»-ի կողմից՝ ՀՀ ԲՆ Կենսառեսուրսների կառավարման վարչության հետ համատեղ:

Դետաքրքրական է այն փաստը, որ շահառությունը շատերը, ներառյալ տեղական ՀԿ-ները, տեղական իշխանությունները եւ տուրիստական գործակալությունները դրական գնահատեցին «Սաֆարի ինտերնեյշն»-ի ներդրումը ապօրինի որսորդության կանխման եւ վայրի կենդանիների պոպուլյացիան ավելացնելու ուղղությամբ:

Զարգացման խոչընդոտներից են նաեւ այցելուների եւ տուրիստական գործակալությունների համար տեղեկատվություն ստանալու հնարավորությունների բացակայությունը, գրոսաշրջային հնարավորություններ մշակելու եւ խթանելու համար համայնքային ռեսուրսների անբավարարությունը, քնական եւ պատմա-մշակութային հուշարձանները պահպանելու անհնարինությունը, ՏԻՄ-երում կազմակերպչական ռեսուրսների անբավարարությունը հիմնական տուրիստական վայրերը (օրինակ հանքային ջրի աղբյուրը) աղբից մաքրելու եւ աղտոտումից պահպանելու համար:

Տուրիզմի հնարավոր տեսակները Ագարակածորում ընդգրկում են արշավները, վայրի կենդանիների դիտումը, առողջարանային տուրիզմը, պատմամշակութային տուրիզմը:

## 2.4.2 Տեղական ինքնակառավարման մարմին

Ագարակածորի ղեկավարությունը նույնական պաշտոնավարում է երկար տարիներ. համայնքապետարանը լրիվությամբ տեղյակ է համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի, պատմամշակութային հուշարձանների, քարանձավների եւ արշավների համար հարմար կածանների մասին համայնքի մեջ մտնող երկու գյուղերում՝ Ագարակածորում եւ Բոլորաբերդում եւ հին գյուղատեղի համարվող Գանձակում: Ագարակածոր համայնքի ղեկավարության թույլ օդակը կազմակերպչական ռեսուրսների անբավարությունն է, որի պատճառով համայնքի տուրիստական ռեսուրսները չեն խթանվում, առողջապահական տուրիզմի ենթակառուցվածքը չի օգտագործվում, իսկ տեսարժան վայրերը չեն մաքրվում աղբից, ինչպես օրինակ՝ «Գոավ»-ի տաք հանքային ջրի աղբյուրը, ուր մեծ քանակությամբ տեղական այցելուներ են գալիս ամռանը: Նաեւ այդ պատճառով, Ագարակածորի տուրիստական ռեսուրսները եւ եկամուտ վաստակելու հնարավորությունները տեղական ընակչության համար մնում են չօգտագործված:

## 2.4.3 Տուրիստական ծառայություններ եւ Միջոցառումներ

### 2.4.3.1 Սևնդի սպասարկումը

Սևնդի սպասարկման կետեր Ագարակոծորում չկան: Սակայն, գյուղից ընդամենը 1 կմ հեռավորության վրա՝ անմիջապես հիմնական մայրուղու մոտ, գործում են 3 ռեստորաններ, որտեղ կարելի է համտեսել պարզ ճաշտեսակներ. խոզի եւ հավի խորոված, քաբար, խորոված եւ եփած ծուկ: Ռեստորանները մաքուր են, բայց աշխատակազմը չի տիրապետում անգլերեն լեզվին, իսկ սպասարկման մակարդակը ցածր է:

### 2.4.3.2 Գիշերակաց

Գիշերակացի հնարավորությունները Ագարակածորում ներկայացված են երկու հյուրատներով, որոնց ներկայացուցիչները մասնակցել են Վերջերս Վայոց Ձորի հյուրատների համար անցկացրած վարժանքին: Յյուրատները առաջմ այցելուներ չեն ունեցել: Յյուրատների տերերը տիրապետում են որոշ հմտությունների, սակայն չեն տիրապետում որեւէ օտար լեզվի:

### 2.4.3.3 Միջոցառումներ եւ փառատոններ

Ագարակածորում միջոցառումներ չեն կազմակերպվում՝ բացառությամբ Ամասնորի ավանդական տոնների եւ Յաղթանակի Օրվան Նվիրված տոնակատարությունների, որոնք սակայն հետաքրքրություն չեն ներկայացնում, քանի որ չկան ավանդական երգի ու պարի ներկայացումներ, որոնք կարող են հետաքրքիր լինել զբոսաշրջիկների համար: Յամայնքն ունի երեխաների պարային խումբ, որը վերջերս մասնակցել է հանրապետական մրցույթի:

## **2.4.4 Ենթակառուցվածքներ**

### ***2.4.4.1 ճանապարհներ եւ տրանսպորտ***

Ազարակաձորը մարզկենտրոնի հետ կապող հասարակական տրանսպորտն աշխատում է կանոնավոր՝ շաբաթական 6 օր, օրական 3 անգամ: Այս ճանապարհն ասֆալտապատ է եւ անցանելի կլոր տարին: Ներհամայնքային ճանապարհների մեջ մասն ասֆալտապատ չէ սակայն գտնվում է նորմալ վիճակում:

### ***2.4.4.2 ճանապարհային նշաններ***

Ազարակաձորում տեղադրված միակ ճանապարհային նշանը գյուղի սկզբում տեղադրված անվանման նշանն է: Կա նաեւ մեկ այլ նշան՝ տեղադրված «Սաֆարի ինտերնեյշնլ»-ի կողմից, որը գգուշացնում է, որ իր կողմից վերահսկվող տարածքում առանց թույլտվության որսորդությամբ զբաղվելն արգելվում է:

### ***2.4.4.3 Հեռահաղորդակցություն***

Գծային հեռախոսակապով ապահովված են Ազարակաձոր համայնքի բոլոր SS-ները: Շարժական կապի բոլոր երեք օպերատորների ծառայություններն ել հասանելի են: Փոստային կապը համայնքում գործում է: Յամացանցը համայնքում հասանելի է բացառապես շարժական կապի մոդեմների միջոցով: Յամայնքին հասանելի են հեռուստատեսային 3 տեղական եւ 1 ռուսական ալիքների հաղորդումները: Հեռարձակվում է ռադիոյի մեկ հանրային ալիք: Հեռահաղորդակցության մակարդակը համայնքում բավարար է եւ տուրիզմի զարգացման տեսանկյունից լուրջ խոչընդոտ չի հանդիսանում:

### ***2.4.4.4 Սոցիալական ենթակառուցվածքներ***

Ազարակաձորում կա միջնակարգ դպրոց՝ 123 աշակերտներով: Յամայնքում առկա է ֆուտբոլի մարզադաշտ եւ փակ սպորտային դահլիճ, բայց սպորտային խմբակներ դեռ չկան: Գործում է առաջին օգնության բուժկետ՝ 2 քույրերով: Բժիշկն համայնք է այցելում ամսական 2 անգամ: Յամայնքում չկա դեղատուն եւ շտապ օգնության մեքենա: Յամայնքում մշտապես գործում են գրադարան եւ մշակույթի տուն, որուց հետագա զարգացումն իր ներդրումը կարող է ուսենալ տուրիզմի զարգացման տեսանկյունից:

### ***2.4.4.5 Տեսարժան վայրեր***

Ազարակաձոր համայնքի հիմնական տեսարժան վայրերի թվում կարելի է նշել.

- XIV-XVII դարերի 17 եկեղեցիներ եւ մատուռներ, որոնցից մեկը ունի սեպագիր արձանագրություններ,
- XIII-րդ դարի կամրջով, որը գտնվել է դեպի Զուլֆա գնացող «Մետաքսի ճանապարհի» վրա,
- Յամայնքից 2 կմ հեռավորության վրա գտնվող XIII-XV դարերի դամբարանադաշտը,
- Գանձակ հին բնակատեղին,
- Յանքային տաք ջրի աղբյուրները,

- ❖ Քարանձավները, որտեղ կան եզակի գերեզմաններ, որոնցում հանգուցյալները թաղված են եղել և ստած վիճակում,
- ❖ Գեղատեսիլ ձորերը եւ հարուստ կենդանական ու բուսական աշխարհը,
- ❖ Ջրովանքը,
- ❖ «Յազարաշեն» առաստաղով երկու տնակները:

## 2.5 ԽԱԶԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՈՒՐԻՉՄԻ ՆԵՐՈՒԺԸ

### 2.5.1 Ընդհանուր ակնարկ

Խաչիկը համայնքը սահմանաշերտ գյուղ է. Երեք կողմից սահմանամերձ է Աղրբեշանի հետ: Այս հանգամանքը գրեթե անհնար է դարձնում Խաչիկում Եկոտուրիզմի ուղեւորություններ կազմակերպելն առանց ուղեկցողի, ով լավ գիտի տեղանքը: Մյուս կողմից, քանի որ համայնքը բարձրադիր է Աղրբեշանի սահմանամերձ համայնքների նկատմամբ, եւ որովհետեւ արշավների եւ ճամբարների համար հարմար վայրերը գտնվում են սահմանից հեռու, տուրիստական գործակալությունները Խաչիկը համարում են համեմատաբար ապահով վայր Եկոտուրիզմի համար, եթե իհարկե, ուղեկցողները լավ գիտեն տեղանքը: Խաչիկում կան հրաշալի վայրեր արշավներ եւ վրանային ճամբարներ կազմակերպելու համար: Առկա է ջրվեժ, լողալու համար հարմար բնական ավազան՝ հրաշալի տեսարանով դեպի Արարատ լեռ, երկու Եկեղեցիներ, որոնցից մեկը Վերանորոգված է, գեղեցիկ ձորում կառուցված հին ջրաղաց եւ մի քանի հին տներ, որոնք կառուցվել են XIX-րդ դարում, օգտագործվում են որպես պահեստ, բայց կարող են վերածվել զբոսաշրջիկներին սնունդ սպասարկելու փոքր ռեստորանի, եթե կատարվեն վերանորոգման որոշ աշխատանքներ: Խաչիկում կարող է զարգանալ նաեւ գիշերակաց արշավները, ժայռամագլցումը եւ մշակութային տուրիզմը:

Նկար 8 - Արարատ լեռան տեսքը Խաչիկ համայնքից



Նկար 7 - Սահմանամերձ Եկեղեցու ավերակները Խաչիկում

### 2.5.2 Տեղական ինքնակառավարում

Խաչիկ համայնքի ղեկավարությունն ընտրվել է վերջերս՝ 2010թ. սեպտեմբերին: Գյուղի վարչակազմը սահմանափակ տեղեկություններ ունի համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի՝ ներառյալ տուրիստական ռեսուրսների մասին: Սակայն համայնքի ղեկավարությունը շատ լավ հասկանում է տուրիստական ոլորտի կարեւորությունը եւ պատրաստակամ է իր աշխատակազմից մասնագետ հատկացնել



տեղեկատվական կենտրոնի համար: Յատկապես արժեքավոր կարող է լինել համայնքապետի տեղակալի բազմամյա փորձը եւ գյուղի տուրիստական ռեսուրսների վերաբերյալ տեղեկացվածությունը:

### **2.5.3 Տուրիստական Ծառայություններ եւ Միջոցառումներ**

#### ***2.5.3.1 Սևնդի սպասարկում***

Սևնդի սպասարկման ծառայություն խաչիկում չկա:

#### ***2.5.3.2 Գիշերակաց***

Գիշերակացի հնարավորություններ համայնքում չկան:

#### ***2.5.3.3 Միջոցառումներ եւ Վառատոններ***

Բացառությամբ Նոր Տարվա եւ Յաղթանակի Օրվա տոնակատարությունների՝ Խաչիկում այլ տոններ չեն նշվում: Յամայնքն ունի երեխաների պարային խումբ, որը հովանավորվում է համայնքի ղեկավարի կողմից եւ կարող է ցուցադրել ազգային պարի կատարումներ:

### **2.5.4 Ենթակառուցվածքներ**

#### ***2.5.4.1 ճանապարհներ եւ տրանսպորտ***

Խաչիկը մարզկենտրոնի հետ կապող հասարակական տրանսպորտն աշխատում է կանոնավոր, բայց ոչ շատ հաճախ՝ շաբաթական 2 անգամ: Այս ճանապարհի 75%-ն ասֆալտապատ է եւ գտնվում է շատ լավ վիճակում: Մնացած մասը՝ ասֆալտապատ չէ եւ գտնվում է նորմալ վիճակում: Ճանապարհն անցանելի է կլոր տարին: Ներհամայնքային ճանապարհների մեծ մասն ասֆալտապատ չէ սակայն գտնվում է նորմալ վիճակում:

#### ***2.5.4.2 ճանապարհային նշաններ***

Յամայնքում ճանապարհային նշաններ չկան: Այս նշանների առկայությունը շատ կարեւոր է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Խաչիկը 3 կողմից սահմանամերձ է Աղբքեցանի հետ:

#### ***2.5.4.3 Քեռահաղորդակցություն***

Արմենթելի ռադիոկապով ապահովված են Խաչիկ համայնքի SS-ների 90%-ը: Մասնակիորեն հասանելի են նաև շարժական կապի մյուս օպերատորների ծառայությունները: Փոստային կապը համայնքում գործում է: Յամացանցը համայնքում հասանելի է բացառապես շարժական կապի մոդեմների միջոցով: Յամայնքին հասանելի են հեռուստատեսային 3 տեղական եւ 1 ռուսական ալիքների հաղորդումները: Ռադիոյի հեռարձակում համայնքում չկա: Քեռահաղորդակցության

մակարդակը համայնքում ընդունելի է, սակայն լրացուցիչ բարելավումների կարիք զգացվում է: Տուրիզմի զարգացման տեսանկյունից հեռահաղորդակցության մակարդակն առայժմ լուրջ խոչընդոտ չի հանդիսանում:

#### *2.5.4.4 Սոցիալական ենթակառուցվածքներ*

Խաչիկում կա միջևակարգ դպրոց՝ 110 աշակերտներով: 2011թ. համայնքում նախատեսվում է կառուցել սպորտային դահլիճ: Գործում են ծանրամարտի եւ պարի խմբակներ: Գործում է առաջին օգևության բուժկետ՝ 1 բժշկով եւ 1 քույրով: Յամայնքում չկա դեղատուն եւ շտապ օգևության մերենա: Յամայնքում մշտապես գործում են գրադարան եւ մշակույթի տուն, որոնց հետագա զարգացումն իր ներդրումը կարող է ունենալ տուրիզմի զարգացման տեսանկյունից:

#### *2.5.4.5 Տեսարժան վայրեր*

Խաչիկ համայնքի հիմնական տեսարժան վայրերի թվում կարելի է նշել.

- Ձրվեծ եւ լողանալու բնական ավազան,
- Արարատ լեռան տեսարանը,
- Մեղրաքարի բերդը (գործել է 1200-1500 տարի առաջ),
- Ջրաղացների բերդի ավերակները,
- Յին Գյուղը՝ Ժամի Թիլը,
- Քարակովի կամ Խոտակերաց Վանքը,
- Բազմաթիվ ջրաղացները,
- Գյուղամիջյան ժամը (1888թ. կառուցված),
- «Դազարաշեն» տիպի երկու տները:

## 3 ԵԶՐԱԿԱՆԳՈՒՄՆԵՐ

### 3.1 ԸՆԴՀԱՆՈՒՐ

Ի տարբերություն ավանդական գրոսաշրջության՝ նախատեսվող «Գնիշիկ» արգելավայրում էկոտուրիզմի զարգացման համար ավելի մեծ շանքերի ներդրում կպահանջվի: Նախ, անհրաժեշտ է շանքեր գործադրել աճող այցելությունների միջոցով բնության վրա ազդեցության մասրամասն մոլոխորինսգի, ինչպես նաև հետագա զարգացման պլանավորման ուղղությամբ՝ ընդ որում ապահովելով շրջակա միջավայրի պահպանում ու բարելավումը եւ մեծացնելով էկոտուրիզմի ծառայությունների մատուցումից ձեւավորվող եկամուտները: Երկրորդ, ընդհանուր առմամբ էկոտուրիզմի եւ արկածային տուրիզմի պարագայում ենթակառուցվածքներից եւ բնակավայրերից հեռու գտնվելը ռիսկեր է առաջանում այն առումով, որ ինարավոր չի լինի հարկ եղած դեպքում պատշաճ կերպով լուծել առողջության հետ կապված եւ այլ ինսդիրներ, եթե ուղեւորությունը կազմակերպված չէ տուր օպերատորի կողմից:

Այս տարածքում բնական միջավայրը չի ընձեռում զանգվածային այցելությունների հնարավորություններ եւ ունի եկամտի ձեւավորման ավելի փոքր ներուժ (սահմանափակ ազդեցություն կացարանների եւ սննդի սպասարկման ոլորտների վրա), հետեւաբար՝ ցածր ծախսարդյունավետություն: Բնությունը պոտենցիալ վտանգներից պաշտպանելու կամ դրանց հետեւանքները վերացնելու, ենթակառուցվածքների ստեղծման եւ պահպանման, հակարդեհային ծրագրի մշակման եւ իրականացման, ինչպես նաև գրոսաշրջային գործունեության հնարավոր բացասական ազդեցություններից խուսափելու ուղղությամբ մեծածավալ աշխատանքներ դեռ պետք է իրականացվեն:

Ըստ Յայաստանի ներգնա տուր օպերատորների միության եւ Յայ գրոսավարների գիլիհայի՝ էկոտուրիզմի եւ արկածային տուրիզմի զարգացման, ինչպես նաև նախատեսվող «Գնիշիկ» արգելավայրի բնական ռեսուրսների պահպանման գործում որպես առաջնային խնդիր շարունակում է մնալ գրոսաշրջային ռեսուրսների կառավարման պակասը: Տուր օպերատորներին, ինչպես նաև առանց նրանց միջնորդության այցելող խմբերին եւ անհատ գրոսաշրջիկներին, անհրաժեշտ է տրամադրել պարզ եւ օգտակար տեղեկատվություն քարանձավաներն այցելելու սահմանափակումների, տարածքը չաղտօնելու եւ բնության պահպանության վերաբերյալ: Չկա տեղեկատվություն վրանային ճամբարների տեղակայման վայրերի եւ դրանցից խմելու ջրի աղբյուրների, մոտակա պատմամշակութային հուշարձանների միջեւ եղած հեռավորության վերաբերյալ, որի օգնությամբ այցելուները կվարողանային անվտանգ կերպով հասնել ճամբարելու վայրեր, արդյունավետորեն կազմակերպել իրենց հանգիստը եւ ել ավելի արժեքավոր դարձնել իրենց ուղեւորությունը՝ համակցելով բնության գրկում իրենց հանգիստը պատմական վայրեր այցելությունների կամ մշակութային միջոցառումներին մասնակցությունների հետ: Չնայած նրան, որ այս վայրն իր հիասքանչ բնապատկերով, կիրճերով, քարանձավաներով եւ պատմական վայրերով հրաշալի հնարավորություններ են ընձեռում արշավների համար, այցելուներ գրավելու համար չկա համապատասխան տեղեկատվություն կամ քարտեզներ:

Արենիի եւ Ազարակածոր գյուղի գործարանները չեն ապահովում բարձրակարգ կարմիր չոր եւ կիսաքաղցր գինու մեծածավալ արտադրություն, ինչը պայմանավորված է հին սարքավորումներով եւ 10-50 տարվա վաղեմության կաղևու տակառների առկայությամբ, որոնք հարմար չեն որակյալ գինու արտադրության համար եւ, ինչն առավել կարեւոր է, պատշաճ որակի հսկման (ՈՅ) գործառությների բացակայությամբ: Չնայած գինու գործարանների (բացի Ազարակածորի գինու

գործարանից, որը վերջերս է հիմնադրվել) տնօրենները եւ դրանցում աշխատող գինեգործներն ունեն հարուստ փորձ այս ոլորտում, դռնորների (Փինանսավորված USDA, CARD, ԱՄՆ ՍՀԳ, EU-REDAM եւ Խոտակայի կառավարության կողմից) աջակցությամբ այցելել են մի շաբթ առաջատար գինու գործարաններ Խոտակայում,

**Պատկեր 1՝ Արենիի գինու գործարանը**

Ֆրանսիայում եւ ԱՄՆ-ում, ստացել են դրամաշնորհներ, վարկեր եւ տեխնիկական աջակցություն, այսուհետեւ, նրանք դեռեւ չեն արտադրում մրցունակ կարմիր գինու տեսականի: Նշված երկու գինու գործարաններից ոչ մեկը չունի գինու համտեսման գրավիչ սրահներ եւ խանութներ, որտեղ այցելուները կարող են վայելել տեղական արտադրության գինի, ճեղք բերել խցանահաններ եւ գինու հետ կապված այլ պարագաներ / արսենուարներ եւ հուշանվերներ: Գինետներից մեկը դեռեւ վերակառուցման փուլում է, որը մեկնարկել է մոտ 8 տարի առաջ: Սրա հիմնական պատճառը ֆինանսների պակասն է, քանի որ ընկերությունը գրավիչ չէ ներդրողների կամ բանկերի համար: Ինչպես արդեն նշվել է, այս գինու գործարանը Վայոց Ձորի մի շաբթ գործարանների հետ միասին, նախկինում արդեն իսկ ստացել է դրամաշնորհային եւ վարկային աջակցություն մի քանի դոնորներից:



Արենի համայնքի հյուրատները (B&B) չեն հանդիսանում գրանցված իրավական մարմիններ եւ չեն վճարում հարկեր պետքութեին, քանի որ գրանցման դեպքում անհրաժեշտ է մշտապես կատարել հարկային եւ այլ վճարներ, կամ կանոնավոր կերպով այցելել հարկային տեսչություն եւ փակել ու վերագործարկել իրենց բիզնեսը/հյուրատունը ամեն անգամ հաճախորդներ ունենալու դեպքում: Նշված երկու տարբերակներն ել ծախսատար են հյուրատների սեփականատերերի համար, այդ իսկ պատճառով ել նրանք նախընտրում են աշխատել «ստվերային» դաշտում:

Դայաստանում հուշարձանների պաշտպանության պատասխանատու մարմինը Պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության գործակալությունն է, որն ունի շատ սահմանափակ բյուջե եւ ի վիճակի չէ վերահսկել բոլոր համայնքներում տեղակայված հուշարձանները աշխատակազմի եւ ռեսուրսների սղության պատճառով (մասնավորապես՝ չկան մերենաներ հուշարձաններ այցելելու եւ դրանց մոնիթորինգն իրականացնելու համար): Գործակալությունը համագործակցում է համայնքային դեկավարների հետ եւ նրանց աջակցությամբ է կարողանում ստանալ տեղեկատվություն հուշարձանների այցելուների վերաբերյալ եւ վերահսկել դրանց վիճակը:

Չկան առկա արշավային երթուղիների քարտեզներ: Այցելուներն իրազեկված չեն պահպանվող տարածքներում իրենց հանգիստը եւ ժամանցը կազմակերպելու կանոնների մասին, իսկ ընական ռեսուրսների օգտագործման նկատմամբ պատշաճ վերահսկողության գրեթե չի իրականացվում, արդյունքում վնաս է հասցվում բնական ռեսուրսներին: Մասնավորապես, վնասվում է քարանձավների ստալագմիտային շերտը, բռնկվում են հրդեհներ, որոնք ոչնչացնում են եզակի բուսականությունը, եւ մարդիկ զբաղվում են անօրինական որսորդությամբ: Նմանատիպ դեպքերին կառավարությունը կամ տեղական կառավարման մարմինները արձագանքում են վնասված տարածքներ մուտքի լիարժեք սահմանափակմամբ, ինչի արդյունքում նվազում են ավելի կազմակերպված այցելուներից եկամուտների ստացման հնարավորությունները: Նշվածի վառ

օրինակ է Գնիշիկ-Մոզրով քարանձավների փակ մուտքը: Սա քարանձավ է, որև ունի եզակի ռեսուրսներ՝ գունավոր ստալագմիտների (պտկաքարեր), ստալագտիտի (շթաքարեր) եւ ստալագնատների համակցություն, եւ որը կարող էր նշանակալի եկամտի աղբյուր հանդիսանալ տեղական պետրյուջի համար ու համայնքի բնակիչներին ապահովել զբոսավար-ուղեկցողների, կացարանային, սևնդի սպասարկման, տեղափոխման ծառայությունների տրամադրման եւ հուշանվերների վաճառքի աշխատատեղերով:

### **3.1.1 Ենթակառուցվածքներ**

Ենթակառուցվածքի հետ կապված մարտահրավերներից են բոլոր համայնքներում կոյուղու համակարգի բացակայությունը, անձրեւոտ եղանակին կամ ծնիալի ժամանակ Գնիշիկ համայնք եւ բնության հուշարձաններ հասնելու հետ կապված դժվարությունները, արշավային արահետների վրա եւ դեպի պատմամշակութային եւ բնության հուշարձաններ ճանապարհային նշանների բացակայությունը (Արենի գյուղում դեպի Նորավանք եւ Սուրբ Աստվածածին եկեղեցի ճանապարհը ցույց տվող նշաններից եւ գինու փառատոնի անցկացման վայրը ցույց տվող գյուղի քարտեզից բացի), Նորավանքից բացի մյուս զբոսաշրջային վայրերում սանհանգույցների բացակայությունը, արշավների եւ վրանային ճամբարների տարածքներում բջջային վատ կապը կամ դրա բացակայությունը: **Ավելի մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է համայնքների սոցիալ-տնտեսական գնահատման մեջ (Ենթակառուցվածքներին նվիրված գլխում):**

### **3.1.2 Զբոսավար-ուղեկցողի հմտություններ**

Համայնքներում չկան արկածային զբոսաշրջության ոլորտի զբոսավար-ուղեկցողներ: Այստեղ, փաստորեն, նման ծառայություններ չեն տրամադրվում այն այցելուներին, ում ուղեւորությունը չի կազմակերպվել տուր օպերատորի կողմից: Այն գյուղացիները, ովքեր ծանոթ են տեղանքին եւ վայրերին, չեն տիրապետում օտար լեզուների եւ չունեն համապատասխան հաղորդակցման, առաջնորդման, առաջին օգնության եւ այլ մասնագիտական հմտություններ: Ընդհանուր առմամբ, օտար լեզուների իմացության մակարդակը ցածր է բոլոր համայնքներում: Շատ հաճախ օտար լեզուներին տիրապետում են միայն Երեւանի ուսումնական հաստատություններում սովորող երիտասարդ ուսանողները, ովքեր ամառային արձակուրդներին տուն են վերադառնում, եւ համայնքների օտար լեզուներ սկար 9 - Կացարան նախատեսվող «Գնիշիկ» արգելավայրում դասավանդող ուսուցիչները: Վերջիններս կարող են աշխատել որպես թարգմանիչներ:

### **3.1.3 Կացարաններ**

Բոլոր համայնքներում (Գնիշիկ-Մոզրովից բացի) գիշերակացի հնարավորություններն ապահովվում են միայն հյուրատների կողմից: 2005թ.-ին «Թուֆենկյան հոսքիթալիթ» ընկերությունը մեկնարկել է Արենի գյուղում նոր հյուրանոցի շինարարությունը, որն այդպես էլ




չափարտվեց, քանի որ ընկերությունը վերանայել է իր առաջնահերթությունները եւ որոշել նախ ավարտել Դիլիջանում եւ Երեւանում նոր հյուրանոցների կառուցումը: Ինչեւէ, ընկերությունը նշել է Ներդրումային միջոցների սակավության մասին եւ դեռեւ չի որոշել, թե երբ կվերսկսի Արենիի հյուրանոցի կառուցման աշխատանքները:

Ներկայում գործում ե 2 հյուրատուն Ագարակաձորում եւ 7 հյուրատուն Արենիում, որոնց սեփականատերերը մասնակցել են հյուրատների համար նախատեսված հատուկ դասընթացների: Արենիի հյուրատներն արդեն իսկ հյուրընկալել են օտարերկրյա հևագետների եւ գրոսաշրջիկների: Այս համայնքներում եւ Խաչիկ գյուղում կան մի քանի այլ տներ մաքուր սանհանգույցով, տաք շրամատակարարմամբ եւ կահավորված ննջարաններով, որոնց սեփականատերերը պատրաստակամ են դրանք շահագործել որպես հյուրատներ: Ներկայում գործող եւ պոտենցիալ հյուրատների սեփականատերերը մասնակցել են 2010թ.-ին Եղեգնաձորում տեղական մի ընկերության կողմից կազմակերպված դասընթացներին, որտեղ ծանոթացել են հյուրատներին բիզնեսին, ննջարաններին, սանհանգույցին, տաք շրամատակարարմամբ եւ հյուրերի սպասարկման առևվող պահանջներին: Յյուրատների սեփականատերերի ներկայիս ուժեղ կողմերը սահմանափակվում են ավանդական կերակրատեսակների պատրաստման եւ ննջարանների ու սանհանգույցի մաքրության ապահովման հմտություններով:

Յյուրընկալության ոլորտի գիտելիքները եւ օտար լեզուների իմացությունը դեռեւ շարունակում են կարեւորագույն խնդիրներ հանդիսանալ: Ագարակաձորում, Գնիշիկ եւ Խաչիկ համայնքներում գործող հյուրատներ չկան: 2009-2010թթ. Գնիշիկ այցելած փոքրաթիվ գրոսաշրջիկները հանգրվանել են գյուղապետի տանը, որտեղ նույնպես առկա են սանհանգույցի հետ կապված խնդիրներ: Բոլոր համայնքներում հյուրատների զարգացման խոչընդոտներից է նաեւ հյուրատան աշխատողների / սեփականատիրոջ համար սոցվճարների կատարման օրենքով սահմանված պահանջը անկախ ստացվող շահուլթից:

Նկար 10 - «Յարսնասար» ռեստորանը Վայոց ձորում



### **3.1.4 Սևսի սպասարկում**

#### ***3.1.4.1 Յասարակական սևսի կետեր***

Օտարերկրյա այցելուների համար պատշաճ սևսի սպասարկում իրականացվում է միայն գլխավոր մայրուղու տարածքում: Եղեմը եւ Յարսնասարն այս երկու ռեստորաններն են, որոնց հետ ներկայում համագործակցում են տուր օպերատորները: Արենի բնակավայրում կան նաեւ երկու փոքր ռեստորաններ, որոնք առաջարկում են պարզ ճաշացանկ, որտեղ չեն իրականացվում համապատասխան հյուրընկալության ծառայություններ եւ չկան օտար լեզուներին տիրապետող աշխատողներ: Այս ռեստորաններ այցելում են միայն տեղի հաճախորդները, մեծամասամբ համայնքի անդամները: Արենի շուկայի սևսի մատակարարման տաղավարներում մատուցվում են պարզ կերակուրներ՝ ղավուրմա, ծուռ եւ կանաչեղեն: Սովորաբար, այս հաստատություններ այցելում

Են վարորդներ, տեղաբնակ կամ սփյուռքահայ այցելուներ, ովքեր կանգ են առնում շուկայում գյուղմթերքներ գնելու և պատակով, կամ որովհետեւ արդեն նախկինում այցելել են այստեղ, կամ իրենց ընկերները կամ բարեկամներն են խորհուրդ տվել այցելել: Բոլոր հյուրատները կարող են մատուցել ավանդական լանչ եւ ճաշ հյուրերի խնդրանքով:

Ուստորանների սեփականատերերը գնահատում են վերապատրաստման դասընթացների կարեւորությունը, սակայն դեռեւս պատրաստ չեն վճարել դրանց համար, քանի որ չունեն վերապատրաստման ծրագրերում մասնակցության փորձ եւ չեն պատկերացնում, թե ինչպես դրանք կարող են օգնել իրենց՝ իրենց եկամուտների մեծացման հարցում:

### 3.1.4.2 Եթնիկ ճաշատեսակներ

Առանձին համայնքների վերլուծության մեջ անդրադարձ չի կատարվել հետազոտվող համայնքներում պատրաստվող ազգային ավանդական ճաշատեսակներին, ինչը սակայն կարեւոր դերակատարություն կարող է ունենալ եթնիկ տուրիզմի զարգացման առումով: Այս ճաշատեսակների մատուցումը կարող է հանդիսանալ տուրիզմի բոլոր տեսակների ծառայությունների փաթեթների կարեւոր բաղկացուցիչ մասը: Ավանդական այս ճաշատեսակներն աչքի են ընկնում ինչպես իրենց համեղությամբ այնպես ել պատրաստման գործընթացի յուրահատկությամբ: Յետազոտության ընթացքում հատուկ անդրադարձ է կատարվել այս խնդրին եւ առանձնացվել են որոշ կերակուրներ, որոնք եթնիկ տուրիզմի զարգացման կարեւոր բաղադրիչ կարող են դառնալ: Նմանատիպ հիմնական ճաշատեսակներից են:

- Թոնիի մեջ է պատրաստված ավանդական «գաթան» քաղցր կամ աղի խորիզով:
- «Թթու բանջար» - պատրաստված է սպիտակ բանջարից, սխտորուկից, մասուրի հյութից, պարունակում է նաեւ լոբի, ծավար, աղացած կարմիր բիբար, թանձնացված այուրով:
- «Քյալագյոշ» - ոսպապուր՝ պատրաստված նախապես քամած եւ չորացրած մածունից՝ չորթանից: Վերջում ավելացվում է դավուրմայով սոխեռած:
- «Ղավուրմա» - լավ եփած ոչխարի կամ տափարի միս, որը կարմրացվում է յուղի մեջ, լցվում կճուճների մեջ եւ ծածկվում յուղի հաստ շերտով:
- «Ղավուրմայով շորվա» - «ղավուրմայի» վրա ավելացվում է սոխ, աղացած կարմիր բիբար, ծավար, տոմատի մածուկ, կարտոֆիլ, շլորաչիր, մարզա/ծիտրոն:
- «Մարզա» - բույսի տեսակ է, որը ավելացվում է բազմաթիվ ճաշատեսակների, տալով դրանց յուրահատուկ համ:
- «Կորով» - Գառան միսը եւ բրինձը եփած թոնիրի մեջ:

### 3.1.5 Տեղական կառավարման մարմիններ

Արենի, Գնիշիկ եւ Ազգարակաձոր համայնքների ղեկավարները տիրապետում են իրենց համայնքների սոցիալտնտեսական տվյալներին եւ բնական ռեսուրսների մասին տեղեկատվությանը: Ներկայումն նրանք ավելի փորձառու են ենթակառուցվածքների, մասնավորապես խմելու ջրի եւ ճանապարհների հետ կապված խնդիրների լուծման հարցում, քան եկոտուրիզմի զարգացման ոլորտում: Նրանք պատրաստ են օժանդակել ցանկացած դրուրային ծրագրի իրենց համայնքներում, սակայն չունեն դունորների կողմից տրամադրվող աջակցությունն օգտագործելու համար անհրաժեշտ հմտությունները: Տեղեկատվական կենտրոնի բացակայության պայմաններում նրանք են հանդիսանում տեղեկատվության հիմնական աղբյուրը եւ կապող օղակը զարգացման ցանկացած ծրագիր իրականացնելու համար:

Համայնքի ղեկավարները հանդես են գալիս որպես իրենց համայնքների մասին տեղեկատվության աղբյուր այցելուների, այդ թվում՝ տուր օպերատորների, անհատ այցելուների եւ դուռըների համար: Նրանք պատրաստակամ են տրամադրել անհրաժեշտ տեղեկություններ: Նրանց մոտ կազմակերպական հմտությունները հիմնականում թույլ են զարգացած, ինչի մասին է վկայում իրենց համայնքներում ոչ բավարար աղբահանումը (Ազարակածոր), տեղումների դեպքում մերժենաների մուտքը համայնք ապահովելու նպատակով ճանապարհի նույնիսկ մի փոքր հատվածը մաքրել չկարողանալու, ինչպես նաև համայնքների եզակի բնական ռեսուրսները վանդալիզմից պաշտպանել չկարողանալու հանգամանքները (Գնիշիկ-Մոզրով): Խաչիկ համայնքի ղեկավարը վերջերս է ընտրվել: Այդ իսկ պատճառով, նրան որոշակի ժամանակ է անհրաժեշտ իր համայնքի ռեսուրսների մասին լավ պատկերացում կազմելու համար: Ինչեւ, այս թույլ կողմերը կարելի է հակակռու նրա տեղակալի փորձով եւ գիտակցությամբ:

### 3.2 ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Ինչպես նշվել է Եկոտուրիզմի համաշխարհային գագաթաժողովի ժամանակ՝ «Եկոտուրիզմի հրաշալի ծառայություններ կան ցանկացած տարածաշրջանում, սակայն դրանց արդյունավետությունը կարող է տուժել ոչ բավարար որակով սպասարկման կամ անարդյունավետ կառավարման պատճառով»:

Նախատեսվող «Գնիշիկ» արգելավայրում Եկոտուրիզմի զարգացման առանցքային խնդիրներն են արդյունավետ կառավարումը եւ դրա համար համապատասխան գործուների ապահովումը: Մասնավորապես՝ բնական ռեսուրսների կայուն օգտագործումը, Եկոտուրիզմի միջոցով տնտեսական զարգացման հնարավորությունների ապահովում տեղի բնակչության համար, շրջակա միջավայրի վրա գրուաշրջության բացասական ազդեցությունների բացակայությունը, ինչպես նաև ենթակառուցվածքների առկայությունը եւ հիմնական աջակցության ծառայությունների տրամադրումը: Սա հնարավոր կլինի միայն այն դեպքում, եթե բոլոր շահագրգիռ կողմերը (տեղական եւ մարզային իշխանություններ, ՅԿ-ներ, Պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության գործակալություն, թանգարաններ եւ այլն) համագործակցեն միմյանց հետ եւ ընդգրկվեն քաղաքականության մշակման գործընթացում: Այս նպատակով անհրաժեշտ է ստեղծել մի հարթակ (օդինակ՝ վարչություն կամ խորհուրդ), որտեղ նրանք կարող են հանդիպել եւ ներկայացնել իրենց մտահոգություններն ու առաջարկները: Անհրաժեշտ է, որ այս խորհուրդն ունենա ԲՀՊՏ կառավարման մարմնի գործունեության վրա ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդելու հնարավորություն՝ դրանով իսկ ապահովելով բոլոր շահագրգիռ կողմերի շահերի պաշտպանությունը: Աշխարհում կիրառվում են ԲՀՊՏ-ների արդյունավետ կառավարման մի քանի մոդելներ: Կարելի է դրանք ուսումնասիրել եւ համապատասխանեցնել տեղի պայմաններին՝ վերը նշված սկզբունքներին համաձայն կիրառելու նպատակով:

ԲՀՊՏ կառավարման մարմնի կարեւոր գործառույթներից պետք է լինի այցելուներին, գրուաշրջիկներին եւ տուր օպերատորներին տեղեկատվության տրամադրելը տպագիր բրոշյուրների, համացանցային կայքեցի եւ հեռախոսային հաղորդակցության միջոցով:

Արենի գյուղի գինու գործարաններում անհրաժեշտ է ստեղծել գինու համտեսման սրահներ եւ գինու արտեսուարներ (մառաններ, խցանահաններ եւ այլն) վաճառող փոքր խանութներ: Կարելի է աշակցություն տրամադրել սրահների ձեւավորման, աշխատակազմի ուսուցման հարցերում, ինչպես նաև մասնակի համատեղ ֆինանսավորում իրականացնել սեփականատիրոջ կողմից ներդրումները խթանելու նպատակով: Գինու որակը բարելավելու համար գործարաններն օժանդակության կարիք

ունեն նաեւ գիտեգործական սարքավորումների եւ նոր տակառների ձեռք բերման հարցում: Զափազանց օգտակար կլինի որակի հսկման լաբորատորիայի ստեղծումը Վրենի գյուղի եւ ողջ Վայոց Ձորի գիտեգործներին օժանդակելու եւ գինու որակը բարելավելու ու վերահսկելու համար: Նշվածն անհրաժեշտ է իրականացնել ողջ շրջանի մակարդակով:

Գինու գործարանները չունեն որակի հսկման գրավոր ընթացակարգեր եւ այս առումով եւս անհրաժեշտ է աջակցել նրանց: Ինչեւէ, հարկ է նշել, որ Վրենի գյուղի գինու գործարանների տևորենները չունեն բիզնեսի կառավարման լուրջ հմտություններ եւ շատ քիչ առաջընթաց են գրանցել, չնայած նախորդ տարիներին տարբեր դուսորների կողմից նրանց տրամադրված աջակցությանը: Այդ իսկ պատճառով, գինու գործարաններին հետագա աջակցություն տրամադրելիս, անհրաժեշտ է սկսել դրանց տևորենների կառավարման հմտությունների ամրապնդումից եւ շարունակել օժանդակել նրանց, երբ նրանք արդեն ունենան բավարար կարողություններ պատկերացնելու համար անհրաժեշտ դրական փոփոխությունները եւ կարողանան պլանավորել ու կառավարել դրանք:

Անհրաժեշտ է օժանդակել «Թուֆենկյան Յոսփիթալիթի» ընկերությանը Վրենի գյուղում հյուրանոցի շինարարությունը ավարտին հասցնելու հարցում: Յյուրատների սեփականատերերը պետք է զարգացնեն օտար լեզուների իրենց հմտությունները եւ բարելավեն հյուրընկալության ունակությունները: Նրանք պետք է անդամակցեն Յյուրատների Սեփականատերերի Միությանը ավելի արդյուսավետ լրբինգ իրականացնելու եւ միասնական ուժերով հյուրատների համար հարկային օրենսդրության վերանայման մասին Կառավարությանը առաջարկություններ ներկայացնելու համար: Վերջերս հյուրատներին առնչվող հարկային դաշտում փոփոխություններ են տեղի ունեցել, եւ անհրաժեշտ է, որ դրանց սեփականատերերը բավականաչափ իրագեկված լինեն դրանց մասին, եւ այս բացասական հանգամանքը կարելի է հաղթահարել համապատասխան միջոցառումներով: Լավ կլիներ նաեւ ֆինանսական աջակցություն տրամադրել հավանական հյուրատների տերերին, որպեսզի նրանք կարողանան բարելավել իրենց ննջարանների եւ սանհանգույցի հարմարությունները:

Չնայած նրան, որ Վարդեսի քարանձավը գրոսաշրջիկների կողմից շատ սիրված վայր է, որտեղ տրամադրվում են սևնդի սպասարկման եւ գիշերակացի ծառայություններ, այնուհանդերձ, այն չունի իրավական կարգավիճակ քարանձավներում սևնդի սպասարկման իրականացման համար օրենքով սահմանված սահմանափակումների պատճառով: Քանի որ Նշված ռեստորանը այցելուների համար գրավիչ վայր է Վայոց Ձորում եւ արդեն երկար ժամանակ է, ինչ գործում է, առաջարկվում է մշակել կանոնակարգեր, որոնց օգնությամբ հնարավոր կլինի եւ՝ շահագործել, եւ՝ պահպանել քարանձավը:

Թռչունների քարանձավը (*Արենի-1*) դեռեւս պատրաստ չէ այցելուներ ընդունել, քանի որ սափորների մնացորդները պաշտպանված չեն եւ դեռեւս չի կազմակերպվում գտածոների ցուցադրություն: Անհրաժեշտ է աջակցություն տրամադրել ցուցափեղկերի ծեւավորման եւ տեղադրման հարցում պաշտպանելու համար գտածոները վնասվելուց եւ, միեւնույն ժամանակ, հնարավորություն տալով այցելուներին տեսնել դրանք:

Պետք է խրախուսել, որ մասնավոր ներդրումներ կատարվեն Մողրովի քարանձավի բացման եւ գործարկման համար: Յայաստանի մրցունակության ազգային հիմնադրամը (ՀՍՎՀ) արդեն աշխատում է այս խնդրի վրա՝ մշակվում են պետական-մասնավոր համագործակցության մոդելի տեսակներ եւ հնարավոր ներդրողների ցուցակներ, որոնց կարող է հետաքրքրել այս առաջարկը: ՀՍՎՀ-ը նախատեսում է կառուցել անհրաժեշտ ենթակառուցվածք (Ներառյալ ջրի, Ելեկտրականության եւ ճանապարհների)՝ թողելով քարանձավի գործարկման 100% ներդրումները մասնավոր հատվածին: ՀՍՎՀ-ը որոշ մտահոգություններ ունի քարանձավի գործարկման վերաբերյալ, քանի որ քարանձավը գտնվում է ապագայում ստեղծվող արգելավայրի տարածքում,

իսկ արգելավայրի կառավարման պլանը դեռևս հաստատված չէ: Դա նշանակում է, որ սահմանափակումների մասին հստակ ուղեցույցը առայժմ բացակայում է, ինչի պատճառով ներդրումային ծրագիրը կարող է վտանգվել:

ՀՄՎՀ-ը նաեւ խորհուրդ չի տալիս բացել Արշերի քարանձավը այն պատճառով, որ քարանձավի միջանցքները նեղ են եւ հնարավորություն չեն տալիս ազատ եւ անվտանգ անցումների համար ենթակառուցվածքներ տեղադրել, առանց վնասելու քարանձավի պատերը: ՀՄՎՀ-ը առաջարկում է օգտագործել այս քարանձավը միայն գիտական այցելությունների համար:

Ուստորանների կառավարման միջին օդակի ողջ անձնակազմը պետք մասնակցի սննդի եւ խմիքի սպասարկման, հաճախորդների սպասարկման եւ անգերեն լեզվի վարժանքներին, քանի որ նրանք ծանոթ չեն սննդի սպասարկման միջազգայնորեն ընդունված ստանդարտներին: Վարժանքները կօգնեն նրանց բարձրացնել սպասարկման որակը եւ ավելացնել հաճախորդների քանակը: Գլխավոր խոհարարը պետք է մասնակցի «Serve Safe» վարժանքին, անվտանգ սնունդ սպասարկելու մասին միջազգային պահանջներին ծանոթանալու համար, Նրանք աշխատում են տարբեր երկրների գրուաշրջիկների աճող քանակի հետ, եւ կարենոր է, որ նրանք ծանոթ լինեն սննդի պատրաստման նկատմամբ միջազգայնորեն ընդունված պահանջներին: Այս երկու դասընթաց/վարժանքները տրամադրվում են Հայաստանի ռեստորանների միության կողմից, որը լուրջ օժանդակություն է ստացել ԱՍՏ ՄՀՀ ՄՌՀ ԾՐՁ ծրագրի կողմից դասընթացներ անցկացնելու համար կարողություններ ստեղծելու նպատակով:

Հնաոճ տիպի տների սեփականատերերին պետք է խրախուսել իրենց տներում սննդի սպասարկման ծառայությունների մատուցման հարցերում՝ մինչեւ 20-30 հոգանոց խմբերի համար մատուցելով ավանդական ուտեստներ ավանդական միջավայրում: Դրանով կբարելավվի եկոտուրիզմի ծառայությունների որակը, հնարավորություն կտրվի տուր օպերատորներին խնայել ժամանակ, քանի որ կարիք չի լինի խմբերին տեղափոխել հարեւան համայնքներում եւ մայրուղում գտնվող ռեստորաններ, որոնք գտնվում են արշավների եւ վրանային ճամբարների վայրերից շատ ավելի հեռու: Միաժամանակ կարենոր է, որ դա համայնքներում լրացուցիչ եկամուտ վաստակելու հնարավորություն կստեղծի:

Առաջարկվում է դաշտային պայմաններին հարմարեցված սանհանգույցներ պատրաստել նաեւ ճամբարների վայրերին մոտ գտնվով հատվածում: Առաջարկվում է նաեւ բջջային հեռահաղորդակցություն մատուցող ընկերություններին խրախուսել շարժական կապի ուժեղացման հարցում, որպեսզի այն հասանելի լինի նաեւ առավել շատ գործարկվող արշավների վայրերում: Դա անհրաժեշտ է տուրիստական ապրանքի որակի բարելավման եւ դժբախտ պատահարներին արագ արձագանքելու համար:

Արշավների երթուղիներ պետք են մշակվեն նախատեսվող «Գնիշիկ» արգելավայրի հնարավորությունները լիարժեք օգտագործելու համար: Տեղանքը հարուստ է ձորերով, աղբյուրներով: Կան նաեւ հանքային եւ միջնադարյան հուշարձաններ, որոնք կարող են արդյունավետ կերպով օգտագործվել արշավների երթուղիներ մշակելու համար: Տեղական բնակչության ներկայացուցիչներից պետք է պատրաստել ուղեկցողներ տուրիստական խմբերի հետ աշխատելու համար: Արշավների եւ ճամբարների համար հատուկ սարքավորումներ պետք է տրամադրվեն արգելավայրի կառավարման կազմակերպություններին, որպեսզի նրանք կարողանան դրանք վարձով տրամադրել տուրիստական խմբերին:

Քարտեզներ պետք են մշակվեն եւ ճանապարհային նշաններ տեղադրվեն ցույց տալու համար ուղղությունը դեպի ճամբարների համար առավել հարմար վայրերը, արշավների երթուղիների ուղղությունները՝ ներառյալ այդ երթուղիներում խմելու ջրի աղբյուրների տեղերը եւ

պատմամշակութային հուշարձանները: Պատմամշակութային հուշարձաններում փոքր նմուշների վնասվելուց եւ կողոպուտից խուսափելու համար պետք է կառուցվեն ցուցադրության համար հատուկ արկղեր, իսկ արժեքավոր նմուշները տեղափոխվեն թանգարաններ: Հուշարձաններ այցելելու համար պետք մշակված լինեն ուղեցույցներ եւ բաժանվեն տուր օպերատորներին եւ այցելուներին, որտեղ կարող է նշված լինել առանձին վայրեր առանց ուղեկցողների այցելությունների սահմանափակումների մասին: Տեղեկատվական վահանակներ պետք է տեղադրված լինեն տեսարժան վայրերում: Մոնիթորինգ պետք է իրականացվի վստահ լինելու համար, որ ուղեցույցներում նշված կարգը պահպանվում է այցելուների կողմից:

Ենթակառուցվածքի եւ ծառայությունների համակարգը մշակելուց հետո ճանաչողական ուղելորություններ պետք է կազմակերպվեն Հայաստանի եւ արտասահմանյան տուր օպերատորների համար՝ նրանց գիշերակացի, սևնդի սպասարկման, արշավերի, վրանային ճամբարների եւ եկոտուրիզմի ծառայությունների այլ տեսակների հնարավորությունների մասին տեղեկացնելու նպատակով: Մասնակիցներին անհրաժեշտ է տեղեկացնել նաեւ տեղեկատվական կենտրոնների մասին. մասնավորապես՝ նրանց գտնվելու վայրի եւ կոնտակտային տեղեկությունների մասին:

## 4 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

### 4.1 Հավելված 1՝ Հետազոտված Շահառուների Ցանկը

Անուն	Կազմակերպություն	Կոնտակտ
Մեսրոպ Մելքոնյան	ԳԱԻՉԻԿ (Սոզրովի) համայնքապետ	093 333386
Ժիրայր Եղյան	Արենիի Համայնքապետ	093 236804
Վարդան Ներսիսյան	Խաչիկի Համայնքապետ	093 681742
Վրթուր Մարտիրոսյան	Վարարակածորի համայնքապետ	094 441655
Շիրակ Միքայելյան	Վայոց Ձորի տուրիզմի Զարգացման Կենտրոնի տնօրեն	093 289326
Կարեն	«Աղվենտուր» Հայաստան ճամփորդական ընկերություն	091 426745
Ռոբերտ Մինասյան	Ներգսա տուրիստական գործակալությունների միության նախագահ	091 226626
Արկադի Սահակյան	«Ազարայր» Արկածային տուրիզմի գործակալության տնօրեն	010 563681
Ռիտա Նավոյան	Հայաստանի ուղեկցորդների գիլդայի խորհրդի անդամ	093 565352
Ալիկ Հարությունյան	Վայոց Ձորի մարզային Զարգացման Կենտրոն	0281 25307
Կարինե Համբարձումյան	Հյուրատան սեփականատեր Արենիում	093 705141
Վրամ Մաթենոսյան	Եղեգնաձորի Օրիուս կենտրոնի համակարգող, «Սաֆարի Ինքնաշխատ» ընկերության նախկին տնօրեն	077 772902
Վրամ Գրիգորյան	Վայոց Ձորի մարզպետարանի տարածքային կառավարման վարչության պետ	093 550002
Նունե Մանուկյան	«Մանուհա մարզետինգ Եւ Փիլո» ընկերության տնօրեն (Արենիի գինու փառատոնի կազմակերպիչ)	091 204760
Սյուզի Ազոյան	ՀՄՎՀ տուրիզմի համակարգող	093 408497
Վանո Դադոյան	«Կենաց Տուն» ՀԿ նախագահ	094 757302

## 4.2 ՀԱՎԵԼՎԱԾ 2. Հետազոտության գործիքը

	<p>WWF Armenia 96 Sarmen Str. Yerevan 0019 Armenia</p>	<p>AM Partners Consulting Company ap.1, 62/1 K.Ulnetsi Str. Yerevan, Armenia</p>	
---	--	--	---

### Տուրիզմի պոտենցիալի գնահատման ՀԱՐՑԱԹԵՐԹ

Հարգելի հարցվող,

Զեզ ներկայացված հարցաթերթի լրացմամբ Դուք կօժանդակեք Բնության Համաշխարհային Հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի զարգացում» ծրագրի իրականացմանը: Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանի կենսաբազմազանության պահպանությանը եւ նպաստել արգելավայրերի ընդլայնմանը՝ ապահովելով էկոհամակարգերի առավել ընդգրկուն ներկայացվածություն:

Հարցաթերթիկը կազմվել է նախատեսվող «Գնիշիկ», «Խուստուի» եւ գործող «Զանգեզուր» արգելավայրերի վերաբերյալ Զեր մոտեցումները պարզաբանելու նպատակով: Ծրագրի իրականացման թիմը կարեւորում է Զեր կարծիքը՝ ակնկալելով հստակ պատասխաններ:

Ակնկալում ենք Զեր աջակցությունը, կանխավ շնորհակալություն:

## 5 Ի. Անձնական տվյալներ

Անուն-ազգանուն	
Կազմակերպություն	
Պաշտոն	
Կրթություն	
Տարիքը	
Հասցեն	

1. Տեղյակ եք, արդյո՞ք «Գնիշիկ», «Խուստուի» արգելավայրերի ստեղծման եւ «Զանգեզուր» արգելավայրի ընդլայնման ծրագրերի մասին: Եթե այո, ապա նշեք՝ ինչ գիտեք (ո՞վ է հիմնում, ո՞ր ծրագրով, ինչ նպատակով՝ եւ այլն):

այո	ոչ

---

---

---

2. Տեղյակ եք, արդյո՞ք «Գնիշիկ», «Խուստուփ» արգելավայրերի նախատեսվող, ինչպես նաև գործող «Զանգեզուր» արգելավայրի առկա տարածքների մասին: Եթե այո, ապա նշեք մոտավոր սահմանները:

այո	ոչ

## ՄԱՍ I. Ենթակառուցվածքներ եւ ծառայություններ

3. Առկա՝ են տարածքում հետեւյալ տուրիստական ենթակառուցվածքները եւ ծառայությունները:

Ենթակառուցվածք կամ ծառայություն	Առկայություն	Նկարագիր
Հյուրանոցներ	<input type="checkbox"/>	
Հյուրատուն	<input type="checkbox"/>	
Նախաճաշ	<input type="checkbox"/>	
ճաշ	<input type="checkbox"/>	
Ընթրիք	<input type="checkbox"/>	
Մշտական սառը ջուր	<input type="checkbox"/>	
Մշտական տաք ջուր	<input type="checkbox"/>	
Սանհանգույց	<input type="checkbox"/>	
Ձեռուցում	<input type="checkbox"/>	
Հեռախոսակապ	<input type="checkbox"/>	
Համացանց	<input type="checkbox"/>	
Տրանսպորտի տրամադրում	<input type="checkbox"/>	
Մեքենաների վարձույթ	<input type="checkbox"/>	
Հեծանիվների վարձույթ	<input type="checkbox"/>	
Վրանների վարձույթ	<input type="checkbox"/>	
Ուղեկցորդներ	<input type="checkbox"/>	
Թարգմանություն	<input type="checkbox"/>	
Տեղեկություններ տվողներ	<input type="checkbox"/>	
Այլ		

4. Կան, արդյո՞ք, սննդի կետեր: Եթե այո, ապա ինչպիսի՝ սնունդ է մատուցվում:  
ա. Տեղական ավանդական \_\_\_\_\_

այո	ոչ

թ. Եվրոպական \_\_\_\_\_  
գ. Տնական \_\_\_\_\_  
դ. Այլ \_\_\_\_\_

5. Որքանո՞վ են հասանելի հեռահաղորդակցության ծառայությունները հյուրանոցային  
տարածքներից դուրս հատվածներում:

6. Որքանո՞վ են հասանելի ֆինանսական եւ բանկային ծառայությունները համայնքներում: Որտե՞ղ  
է (ինչքա՞ն հեռու է) մոտակա բանկային բաժանմունքը:

7. Ինչպիսի՞ կանոնավոր միջոցառումներ են անցկացվում համայնքում կամ այցելության կոնկրետ  
վայրերում:

Մշակութային

Ավանդական

Տնտեսական

Այլ

8. Թվարկեք նշված տարածքների հետ եւ դրանց համար աշխատող տուրիստական կառույցների եւ  
կազմակերպությունների անուններ:

9. Արդյոք համայնքը կամ այցելության վայրերը ներգրավված են տուրիստական  
երթուղիներում: Եթե այո, ապա ինչպիսի՞:

այո	ոչ

10. Ինչպիսի՞ վիճակում են գտնվում ճանապարհները:

Միջհամայնքային

Ներհամայնքային

Տուրիստական երթուղիները

11. Ինչպե՞ս է աշխատում հասարակական տրանսպորտը:  
Երթուղային տրանսպորտ

Տաքսի ծառայություններ

12. Կա՞ն արդյոք ճանապարհային նշաններ եւ տեղեկատվական ցուցավահանակներ:

Հիմնական մայրուղիների վրա:

այո	ոչ

Միջհամայնքային ճանապարհների վրա:

այո	ոչ

Այցելության վայրերի ճանապարհին:

այո	ոչ

13. Կա՞ն արդյոք տպագիր նյութեր այցելության վայրերի մասին: Եթե այո, խնդրում ենք տրամադրել:

14. Դիտարկվող տարածքում կա՞ արդյոք առողջապահական հաստատություն: Ինչպիսի՝ \_\_\_\_\_, որտեղ \_\_\_\_\_

այո	ոչ

15. Որքա՞ն է հեռավորությունը մինչեւ մոտակա առողջապահական հաստատությունը:

## ՄԱՍ II. Տուրիստական ռեսուրսներ

16. Ինչպիսի այցելության վայրեր կան համայնքի եւ հարակից տարածներում:  
ա.Բնական հուշարձաններ (անտառներ, լեռներ, քարանձավներ, գետեր, լճեր, .....)

բ.Եկեղեցիներ \_\_\_\_\_

գ. Մշակութային հուշարձաններ \_\_\_\_\_

դ.Այլ

---

## ՄԱՍ VI. Փոխկապվածություն

17. Ինչպե՞ս կարող է արգելավայրերի տուրիստական պոտենցիալը նպաստել Զեր զարգացմանը:

---

18. Ինչպե՞ս կարող է տուրիզմի զարգացումը նպաստել արգելավայրերի զարգացմանը:

---

18. Ինչ մասնակցություն կարող եք Դուք ունենալ արգելավայրերում տուրիզմի կազմակերպման և զարգացման գործընթացում:

---